Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

М. Махтеси-Якобянцъ, Родной языкъ, букварь для детей-армянъ; Первый годъ. Третье изданiе. Шуша 1886
1052

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

# ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Երրորդ Տպագրութիւն

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Մ. ՄԱՀՏԵՍԻ-ՅԱԿՈԲԵԱՆՑ

ՇՈՒՇԻ

Տպարան և գրավաճառանոց Մ. Մահտեսի-Յակոբեանցի

1886

3985

Библиотека Института востоковедения Академии Наук СССР

491.99-8
Մ-23

1052
49199-8
Մ-23

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

# ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

## ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ԱՌԱՋԻ՛Ն ՏԱՐԻ

*Երրորդ Տպագրութիւն*

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

**Մ. ՄԱՂԹԵՍԻ-ՅԱԿՈԲԵԱՆՑ**

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
B 2002

ՇՈՒՇԻ
Տպարան և գրավաճառանոց Մ. Մաղթեսի-Յակոբեանցի
1886

Дозволено Цензурою 18 Октября 1885 года
Г. Тифлисъ.

50549-աh

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ–Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

36256-66

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

## ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

## ԱՅԲՈՒԲԵՆ

Ն Ր Կ Ա Թ Ա Գ Ի Ր

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ
Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո
Չ Պ Ջ Ռ Ս Վ
Տ Ր Ց Ւ Փ
Ք Օ Ֆ

## ԲՈԼՈՐ ԳԻՐ

ա բ գ դ ե զ է ը թ
ժ ի լ խ ծ կ հ ձ
ղ ճ մ յ ն շ ո
չ պ ջ ռ ս վ
տ ր ց ւ փ
ք և օ ֆ

## ՆՕՏՐ ԳԻՐ

ա բ գ դ ե զ է ը թ
ժ ի լ խ ծ կ հ ձ
ղ ճ մ յ ն շ ո
չ պ ջ ռ ս վ
տ ր ց ւ փ
ք և օ ֆ

## ՁԱՅՆԱՒՈՐ ԳԻՐ

ա ե է ը ի ո ւ օ



## ՀԵԳ ԵՐԿԱԳԻՐ ՎԱՆԿԵՐ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| աբ | ագ | ադ | աղ | աթ | աժ |
| եբ | եգ | եդ | եղ | եթ | եժ |
| էբ | էգ | էդ | էղ | էթ | էժ |
| ըբ | ըգ | ըդ | ըղ | ըթ | ըժ |
| իբ | իգ | իդ | իղ | իթ | իժ |
| ոբ | ոգ | ոդ | ող | ոթ | ոժ |
| օբ | օգ | օդ | օղ | օթ | օժ |
| ուբ | ուգ | ուդ | ուղ | ութ | ուժ |
| իւբ | իւգ | իւդ | իւղ | իւթ | իւժ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| էլ | էխ | էծ | էկ | էհ | էձ |
| ալ | ախ | ած | ակ | ահ | աձ |
| ել | եխ | եծ | եկ | եհ | եձ |
| ըլ | ըխ | ըծ | ըկ | ըհ | ըձ |
| իլ | իխ | իծ | իկ | իհ | իձ |
| ոլ | ոխ | ոծ | ոկ | ոհ | ոձ |
| օլ | օխ | օծ | օկ | օհ | օձ |
| ուլ | ուխ | ուծ | ուկ | ուհ | ուձ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| իղ | իճ | իմ | իյ | ին | իշ |
| աղ | աճ | ամ | այ | ան | աշ |
| եղ | եճ | եմ | եյ | են | եշ |
| էղ | էճ | էմ | էյ | էն | էշ |
| ըղ | ըճ | ըմ | ըյ | ըն | ըշ |
| ող | ոճ | ոմ | ոյ | ոն | ոշ |
| օղ | օճ | օմ | օյ | օն | օշ |
| ուղ | ուճ | ում | ույ | ուն | ուշ |
| իւղ | իւճ | իւմ | իւյ | իւն | իւշ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| օչ | օպ | օջ | օռ | օս | օվ |
| աչ | ապ | աջ | առ | աս | ավ |
| եչ | եպ | եջ | եռ | ես | եվ |
| էչ | էպ | էջ | էռ | էս | էվ |
| ըչ | ըպ | ըջ | ըռ | ըս | ըվ |
| իչ | իպ | իջ | իռ | իս | իվ |
| ոչ | ոպ | ոջ | ոռ | ոս | ով |
| ուչ | ուպ | ուջ | ուռ | ուս | ուվ |
| իւչ | իւպ | իւջ | իւռ | իւս | իւվ |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| իւտ | իւր | իւց | | իւփ | իւք | իւֆ |
| ատ | ար | աց | աւ | ափ | աք | աֆ |
| ետ | եր | եց | եւ | եփ | եք | եֆ |
| էտ | էր | էց | ու | էփ | էք | էֆ |
| ըտ | ըր | ըց | ըւ | ըփ | ըք | ըֆ |
| իտ | իր | ից | իւ | իփ | իք | իֆ |
| ոտ | որ | ոց | ու | ոփ | ոք | ոֆ |
| օտ | օր | օց | | օփ | օք | օֆ |
| ուտ | ուր | ուց | | ուփ | ուք | ուֆ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| բա | գա | դա | զա | թա | ժա |
| բե | գե | դե | զե | թե | ժե |
| բէ | գէ | դէ | զէ | թէ | ժէ |
| բը | գը | դը | զը | թը | ժը |
| բի | գի | դի | զի | թի | ժի |
| բո | գո | դո | զո | թո | ժո |
| բօ | գօ | դօ | զօ | թօ | ժօ |
| բու | գու | դու | զու | թու | ժու |
| բիւ | գիւ | դիւ | զիւ | թիւ | ժիւ |

լե խե ծե կե հե ձե
լա խա ծա կա հա ձա
լէ խէ ծէ կէ հէ ձէ
լը խը ծը կը հը ձը
լի խի ծի կի հի ձի
լո խո ծո կո հո ձո
լօ խօ ծօ կօ հօ ձօ
լու խու ծու կու հու ձու
լիւ խիւ ծիւ կիւ հիւ ձիւ

---

ղը ճը մը յը նը շը
ղա ճա մա յա նա շա
ղե ճե մե յե նե շե
ղէ ճէ մէ յէ նէ շէ
ղի ճի մի յի նի շի
ղո ճո մո յո նո շո
ղօ ճօ մօ յօ նօ շօ
ղու ճու մու յու նու շու
ղիւ ճիւ միւ յիւ նիւ շիւ



չօ պօ ջօ ռօ սօ վօ
չա պա ջա ռա սա վա
չե պե ջե ռե սե վե
չէ պէ ջէ ռէ սէ վէ
չը պը ջը ռը սը վը
չի պի ջի ռի սի վի
չո պո ջո ռո սո վո
չու պու ջու ռու սու վու
չիւ պիւ ջիւ ռիւ սիւ վիւ

---

տու րու ցու ւու փու քու ֆու
տա րա ցա ւա փա քա ֆա
տե րե ցե ւե փե քե ֆե
տէ րէ ցէ ւէ փէ քէ ֆէ
տը րը ցը ւը փը քը ֆը
տի րի ցի ւի փի քի ֆի
տո րո ցո ւո փո քո ֆո
տօ րօ ցօ ւօ փօ քօ ֆօ
տիւ րիւ ցիւ ւիւ փիւ քիւ ֆիւ

Ի՛նչ, ան է — Ո՛հ գիր մը

Ես ո՛չ եմ — Թէ որ ան է

Սա չէ՞ որ — Դա ալ չէ՞

Ցօ է տա — Եւ ալ տու

Եկ տու իս — Էգ էշ մը

Օր մը, հա՞ — Ո՛վ է սա

Օ՛ն, եւ եկ — Հօ, լու մը

Ո՛ւհ, օձ մը — Եւ բու մը

Ալ աս իմն է — Ո՛ւր ես դու

## ՔԱՌԱԳԻՐ ԲԱՌԵՐ ՄԻԱՎԱՆԿ

| | | | |
|---|---|---|---|
| Բաց | Քար | Բան | Շահ |
| Հաց | Տար | Լան | Ման |
| Թաց | Լար | Վան | Գախ |
| Խած | Վառ | Համ | Վախ |
| Մած | Բառ | Գամ | Ջառ |
| Խակ | Սակ | Ծակ | Գահ |



| | | | |
|---|---|---|---|
| Բեր | Մեծ | Դեղ | Բեն |
| Գեր | Խեց | Մեղ | Գեն |
| Վեր | Սեղ | Տեղ | Զեն |
| Լեռ | Ձեղ | Գեղ | Թեմ |
| Քեռ | Քեղ | Գեղ | Ջեմ |

| | | | |
|---|---|---|---|
| Հէղ | Պէս | Խէթ | Խէչ |
| Վէգ | Կէս | Գէթ | Մէջ |
| Մէգ | Վէս | Վէտ | Գէջ |
| Մէկ | Գէգ | Մէտ | Վէճ |
| Շէկ | Սէգ | Գէտ | Խէժ |

| | | | |
|---|---|---|---|
| Գին | Գիր | Ցից | Քիթ |
| Վին | Գիր | Լից | Վիթ |
| Գիմ | Ժիր | Բիծ | Շիշ |
| Գիմ | Լիր | Գիծ | Շիթ |
| Հիմ | Հիռ | Լիճ | Վիղ |

| | | | |
|---|---|---|---|
| Փոս | Ճոն | Քօղ | Յօն |
| Ճոս | Գոն | Մօր | Բօթ |
| Բոց | Մոմ | Տօն | Հօթ |
| Գոց | Գոմ | Ձօն | Մօտ |
| Ճոծ | Ծոմ | Թօն | Ճօտ |

---

| | | | |
|---|---|---|---|
| Մութ | Տուն | Բիւր | Ճիւղ |
| Գութ | Հուն | Դիւր | Ձիւղ |
| Թութ | Քուն | Ծիւր | Գիւղ |
| Գուռ | Ճում | Խիւս | Ճիւթ |
| Բուռ | Քում | Կիւս | Գիւտ |

---

| | | | |
|---|---|---|---|
| Ընդ | Այտ | Երդ | Երբ |
| Աչք | Այր | Ենթ | Երգ |
| Անկ | Այն | Եղկ | Երր |
| Աղտ | Այս | Եղծ | Էշք |
| Արտ | Այդ | Երկ | Էջք |



| | | | |
|---|---|---|---|
| Ընդ | Իսկ | Օգն | Ուղ |
| Ըստ | Ողբ | Ութ | Ուժ |
| Իղձ | Ոտն | Ուլ | Իւր |
| Ինձ | Ողջ | Ուր | Ուս |
| Ինչ | Որթ | Ուշ | Իւղ |

---

| | | | |
|---|---|---|---|
| Բայ | Դեւ | Դաւ | Քոյ |
| Վայ | Ձեւ | Նաւ | Նոյ |
| Ճայ | Թեւ | Բու | Գոյ |
| Թէյ | Խեւ | Խաւ | Ոյծ |
| Խոյ | Քեւ | Ցաւ | Ոյժ |

---

## ՔԱՌԱԳԻՐ ԲԱՌԵՐ ՄԻԱՎԱՆԿ

| | | | |
|---|---|---|---|
| Վանք | Մաղձ | Մենք | Ծեղխ |
| Ջանք | Քաղց | Մեղկ | Ծեղծ |
| Լանք | Գանձ | Հերտ | Մերկ |
| Բարխ | Տանձ | Հեղջ | Ծեղջ |
| Վարք | Պարտ | Հեշտ | Ձեռք |

| | | | |
|---|---|---|---|
| Շէնք | Գիրտ | Խորք | Խօսք |
| Վէրք | Գիրք | Գորգ | Դրող |
| Զէնք | Թինդ | Գործ | Հոռք |
| Դէմք | Լիրր | Հողմ | Բողք |
| Դէպք | Խենդ | Յովտ | Ցողք |

| | | | |
|---|---|---|---|
| Քուրձ | Ճիւղձ | Յայտ | Լոյս |
| Քուրմ | Հիւսն | Փայտ | Յոյս |
| Մուրձ | Հիւրք | Լայն | Քոյր |
| Մուշկ | Ձեռք | Հայր | Զոյգ |
| Թուղթ | Մենք | Մայր | Մութ |

## ԵՐԿՎԱՆԳ ԲԱՌԵՐ

| | | |
|---|---|---|
| Ան նա | Խո նարհ | Ջըր ակն |
| Բա րի | Ծա ռայ | Պա րան |
| Գա ւիթ | Կա պոյ | Զըն ջոց |
| Դա ւիթ | Հան դերձ | Ու ոտն |
| Ե րեկ | Ձը րի | Մա միթ |
| Զօ րեղ | Դըն ջակ | Վար սակ |
| Է ակ | Ճա րակ | Տմ սակ |



| | | |
|---|---|---|
| Ըն տիր | Մա նուկ | Բա րուն |
| Թե թեւ | Յա ջող | Ցե րեկ |
| Ժա ռանգ | Նա ւակ | Փա ղանգ |
| Իբ րեւ | Շըղ թայ | Քա րոզ |
| Լը զում | Ո րոց | Օ ծում |

| | | |
|---|---|---|
| Գա ղան | Ա ռնք | Եղ բայր |
| Զա ւակ | Ա ռնք | Քար այր |
| Աստ ւած | Ա նոնք | Փայ տոտ |
| Հաս տած | Շը նորհք | Ծայ րատ |
| Տըր ուիլ | Աշ խարհք | Եր բեմն |
| Անձ րեւ | Հո վիւ | Եղ ած |
| Բա րեւ | Եր ձեւ | Ըն տել |
| Ծա րաւ | Վա տնակ | Ըն ձիւղ |
| Տա րաւ | Քառ եակ | Ա պուշ |
| Գամ ուիլ | Մի ակ | Ա պուր |

## ՄԱՂԹԱՆՔ

Ով Տէր Աստուած իմ,
Օրհնէ՛ ինձ հիմայ.
Որ կարդալ սորվիմ,
Լինիմ լաւ տղայ:

Թէ որ դու չօգնես,
Իմ ջանքս զուր է.
Ով իմ Աստուածըս,
Ինձ վերից օրհնէ՛ :

---

Մէկ սիրուն գառնուկ երբ տեսնում էք, նա ձեր մտքերնիդ չէ՞ ձգում Աստուծոյ գառը՝, որ չմեղանչեց և իւր վերայ արատ չունէր: Աղօթք արէք նորան, որ իւր մէջը եղած միտքը ձեր մէջն էլ մտնէ:

---

Տե՛ս աղաւնին: Նա մէկ հեզ և բարի թռչուն է և վնաս չը անել: Երբ որ երկուսը կամ երեքը մի և նոյն բունի մէջ լինին, միմեանց հետ սիրով կը



բնակվին: Յովհաննէսը և Աննան և ամէն տղայ և աղջիկ պարտական են ջանք անել՝ որ բարի և բարերար լինեն: Աստուծոյ Որդին՝ որ մեռաւ մեզ մեղքերից ազատելու համար, կարող է ձեզ օգնել, որ աղաւնու պէս հեզ և խոնարհ լինէք:

---

| | | |
|---|---|---|
| Վայրկեան | Օր | Ամիս |
| Րոպէ | Գիշեր | Տարի |
| Ժամ | Եօթնեակ | Դար |

---

## ԵՌԱՎԱՆԿ ԲԱՌ

| | | |
|---|---|---|
| Վար ժա պետ | Կա ղա մար | Ա րա րիչ |
| Ա շա կերտ | Օ րը մէ լին | Բա րե գործ |
| Դըպ րա տուն | Ձե ռա գիր | Ո ղոր մած |
| Դա սա տու | Թը րուա բան | Հո գե սէր |
| Գըր քա տուն | Պատ մա գէտ | Բա րե րար |
| Կա ղա մար | Հաշ ուե գիր | Եր կիւ ղած |
| Վար ժա րան | Բաց մա վէպ | Անձ նու րաց |

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍՌ-Арм. ССР и. им. А. Мясникяна
ИНСТИТУТА ВОСТОКО...
36256-68

| | | |
|---|---|---|
| Ճե մա րան | Օ րա գիր | Գը թու թիւն |
| Գը րա գէտ | Լը րա գիր | Նե ղու թիւն |
| Գիտ նա կան | Թըղ թա տար | Գո վե լի |
| Ժը րա ջան | Բազ մա մարդ | Սի րե լի |
| Յա ջո ղակ | Բը նա կան | Ցան կա լի |
| Ան կա վարժ | Ոս կե հանք | Խըղ ճա հար |
| Քըն նա կան | Փայ տե ղէն | Մեղ սա կից |
| Հե գա րան | Քա րա կոծ | Գոր ծու նեայ |
| Պա տու հան | Հան քա գործ | Բա րե կիրթ |
| Գոր ծա րան | Ոս կի ծով | Հայ րա կան |
| Աս տի ճան | Շո գե կառք | Այ րա կան |
| Ան կո ղին | Մե քե նայ | Որ դե սէր |
| Դըռ նա պան | Ճա խա րակ | Սի րա լիր |

## ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ

| | |
|---|---|
| Գըր րա վա ճառ | Կեն ցա ղա գէտ |
| Ու սում նա սէր | Հը րա շա գործ |
| Դըպ րո ցա կան | Ան վան չա կան |
| Թըղ թա վա ճառ | Վա տա բա րո յիկ |
| Ու սում նա կան | Անդ րան կու թիւն |
| Պա տե րազ մող | Ան ձը նը ղու թիւն |
| Եր կա թա գործ | Աս տու ծա պաշ տու |
| Ոս կեր չու թիւն | Բա րե պաշ տօն |
| Ա տաղ ձա գործ | Բան ջա րա նոց |
| Քա ղա քա գէտ | Բը ժը նա րա հոր |
| Զի նու ո րա կան | Ճը շը նոր հա լի |



| | |
|---|---|
| Մը նա մաք ուրկ | Բաց րա բա յայ |
| Նա ւա տոր միղ | Հե զա հո գի |
| Հա զա րա պետ | Ե կե ղե ցի |
| Մը սա վա ճառ | Ժո ղո վա րան |
| Ճա նա պար հորդ | Սաղ մո սա րան |
| Կա ռա վա րիչ | Ե պիս կո պոս |
| Վե րա տե սուչ | Սար կա ւա գունք |
| Հե ծե լա զօր | Պաշ տօ նա տունք |
| Եր կա թու ղի | Խոր հըր դա ւոր |

## ԱՅԲՈՒԲԵՆԻ ՎԵՐԱՅ ՍՈՒՐԲ ԳՐՔԻՑ ԽՕՍՔԵՐ

Ամէն օր Աստուծոյ երկիւղին մէջ կա՛ց։ Առակ. ԻԳ. 17։

Բոլոր սրտովդ Աստուծոյ ապաւինէ։ Առակ. Գ. 5։

Գործքի մէջ իմաստութեամբ վարուողը բարիք կը գտնէ։ Առակ. ԺԶ. 20։

Դու քու աչքիդ առաջին իմաստուն մի՛ լինիր։ Առակ. Գ. 7

Երանի այն մարդին, որ իմաստութիւն կգտնէ։ Առակ. Գ. 13։

Զիս պիտի որոնէք և պիտի գտնէք։ Երեմ. ԻԹ. 13.

Ընտրեցէ՛ք ձեզ՝ համար այսօր թէ ո՛ւմ պիտի պաշտէք: Յես. ԻԴ. 15:

Թէ որ արդարները զօրանան՝ ժողովուրդը կ'ուրախանայ: Առակ. ԻԹ. 2:

Ժիր եղէ՛ք, զօրացէ՛ք: Ա. Կորն. ԺԶ. 13:

Ինչ որ առաջներնիդ դրուի, կերէ՛ք: Ղուկ. Ժ. 8:

Լռելու ժամանակ և խօսելու ժամանակ (կայ): Ժող. Գ. 7:

Խրատը պահողը կենաց ճանապարհումն է: Առակ. Ժ. 17:

Ծոյլ ձեռքով բան անողը աղքատ կ'լինի: Առակ. Ժ. 4:

Կռուից ետ կենալը մարդոյ համար փառք է: Առակ. Ի. 3:

Համը նայեցէ՛ք և տեսէ՛ք որ Տէրը բարի է: Սաղ. ԼԴ. 8.

Ձեզ նոր սիրտ պիտի տամ: Եզեկ. ԼԶ. 26:

Ճշմարտութիւն խօսողը արդարութիւն է յայտնում: Առակ. ԺԲ. 17:

Յիմարները յանցանքը ծաղր են անում: Առակ. ԺԴ. 9:

Սաղաւարտը փրկութեան ալ իր վերայ առաւ: Եսայ. ՆԹ. 17:



Շատ խօսքերի մէջ յանցանքը պակաս չէ: Առակ. Ժ. 19:

Որդեա՛կ իմ, քո սիրտը ինձ տո՛ւր: Առակ. ԻԳ. 26:

Չէ թէ իմ կամքս՝ բայց քոյդ թո՛ղ լինի: Ղուկ. ԻԲ. 42:

Պակասամիտ լինողը իր դրացին արհամարում է: Առակ. ԺԱ. 12:

Ջանք արէ՛ք, որ նեղ դռնից մտնէ՛ք: Ղուկ. ԺԳ. 24:

Սուտ շրթունքները Աստուծոյ առաջին պիղծ են: Առակ. ԺԲ. 22:

Վեց օրուան մէջ ստեղծեց Տէրը երկինքը երկիրը, ծովը և բոլոր նորանց մէջ եղածները: Ելից. Ի. 11:

Տէ՛ր, ի՞նչ ես ուզում որ անեմ: Գործ. Թ. 6:

Ցորեն պահողին ժողովուրդը կ'անիծէ: Առակ. ԺԱ. 26:

Փափագի կատարուիլը հոգուն համար քաղցր է: Առակ. ԺԳ. 19:

Քո օրէնքդ սիրողները շատ խաղաղութիւն ունին: Սաղ. ՃԺԹ. 165:

Օրէնք պահողը իմաստուն որդի է: Առակ. ԻԸ. 7:

## ԹՈՒԵՐ

### ԹՈՒԱՆՇԱՆ ԳԻՐ ԱՆՈՒՆ

| | | |
|---|---|---|
| 1 | ա | մէկ |
| 2 | բ | երկու |
| 3 | գ | երեք |
| 4 | դ | չորս |
| 5 | ե | հինգ |
| 6 | զ | վեց |
| 7 | է | եօթը |
| 8 | ը | ութ |
| 9 | թ | ինը |
| 10 | ժ | տասն |
| 11 | ժա | տասնըմէկ |
| 12 | ժբ | տասներկու |
| 13 | ժգ | տասներեք |
| 14 | ժդ | տասնչորս |
| 15 | ժե | տասնհինգ |
| 16 | ժզ | տասնվեց |
| 17 | ժէ | տասն եւ եօթն |
| 18 | ժը | տասնութ |
| 19 | ժթ | տասնինը |
| 20 | ի | քսան |
| 30 | լ | երեսուն |
| 40 | խ | քառասուն |
| 50 | ծ | յիսուն |
| 60 | կ | վաթսուն |
| 70 | հ | եօթանասուն |
| 80 | ձ | ութսուն |
| 90 | ղ | իննսուն |
| 100 | ճ | հարիւր |
| 200 | մ | երկու հարիւր |
| 300 | յ | երեք հարիւր |



### ԹՈՒԱՆՇԱՆ ԳԻՐ ԱՆՈՒՆ

| | | |
|---|---|---|
| 400 | ն | չորս հարիւր |
| 500 | շ | հինգ հարիւր |
| 600 | ո | վեց հարիւր |
| 700 | չ | եօթը հարիւր |
| 800 | պ | ութ հարիւր |
| 900 | ջ | ինը հարիւր |
| 1,000 | ռ | հազար |
| 10,000 | ռժ | տասը հազար կամ բիւր |
| 100,000 | ռճ | հարիւր հազար |
| 1,000,000 | ռռ | միլիոն |

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Սուրբ գիրքը ամէն գրքերից պատուականն է. որին Աստուած տուաւ մարդուն, նորան իմաստուն և բարի շինելու համար։ Երբ որ մեծանաս, կ'կարողանաս Աստուծոյ Սուրբ գիրքը կարդալ։ Նա քեզ կիմացնէ թէ ինչպէս Աստուած իր սիրելի Որդին ղրկեց, մարդիկներին մեղքից ազատելու համար։ Եթէ Աստուծոյ խօսքը այսինքն

Աստուածաշունչն կարդամ նորա սէրն զգամ և ջանամ նորա կամքը կատարելու, երբ որ մեռնիս, պիտի գնաս և երկնքումը Յիսուսի հետ բնակվիս: Մեղքից հեռու կա՛ց, Աստուծուց վախի՛ր և քո հոգիդ ապահով կ'լինի նորա ձեռքում:

## ՀՆԳԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ

| | |
|---|---|
| Աշ-խար-հա-գրու-թիւն | Խը-րա-տա-ցու-ցա-նել |
| Բը-նա-բա-նա-կան | Ծաղ-կե-ցու-ցա-նել |
| Երկ-րա-գոր-ծու-թիւն | Ծան-րա-գա-ւու-մըն |
| Երկ-րա-չա-փա-կան | Ծը-ւ-ղա-նա-կիր-կեղ |
| Ար-ժա-նա-պա-տիւ | Ծը-նըն-դա-բա-նել |
| Ա-րե-ւա-ծա-գիկ | Ծու-լա-մը-տու-թիւն |
| Ար-քե-պիս-կո-պոս | Կան-խա-գի-տու-թիւն |
| Ա-ւե-տա-րա-նիչ | Կա-ռա-վա-րու-թիւն |
| Ա-ւե-լոր-դա-պաշտ | Կա-տա-կեր-գու-թիւն |
| Բազ-մա-ցու-ցա-նել | Հե-ռա-ցու-ցա-նել |
| Բա-նաս-տեղ-ծա-կան | Հը-նա-զան-դու-թիւն |
| Բա-րե-խառ-նու-թիւն | Հը-նա-խօ-սու-թիւն |
| Եր-գե-հո-նա-կար | Ձի-ըն-թա-ցա-բան |
| Ըն-դար-ձա-կա-տար | Ճա-խա-րա-կա-գործ |
| Ը-զէկ-նա-լըր-ակց | Ճա-կա-տա-գըր-եան |
| Խառ-նա-փըն-դը-ըել | Մե-ծա-ցու-ցա-նել |



| | |
|---|---|
| Խո-ւար-տա-... | Մեր-կա-պա-րա-նոց |
| Խը-նա-մար-կու-թիւն | Յանձ-նա-րա-րու-թիւն |

## ՎԵՑԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ

| | |
|---|---|
| Ա-ւե-տա-րա-նա-կան | Ժա-մա-նա-կա-գրու-թիւն |
| Ե-պիս-կո-պո-սու-թիւն | Նը-մա-նա-բա-ժու-թիւն |
| Եր-կո-տա-սա-նա-մեայ | Ան-հա-ւա-տար-մու-թիւն |
| Կա-նո-նա-պա-հու-թիւն | Աստ-ւա-ծա-բա-նա-կան |
| Նը-ւա-զա-ցու-ցա-նել | Ան-գա-մա-զըն-նու-թիւն |
| Ան-ի-րա-ւու-թա-նալ | Ա-նա-պա-կա-նու-թիւն |
| Սա-սա-նե-ցու-ցա-նել | Ա-տե-նա-խօ-սու-թիւն |
| Տի-ե-զե-րա-հը-բաշ | Հա-կա-ռա-կոր-դու-թիւն |
| Ե-ղա-նա-կա-ւո-րել | Նա-ւա-գը-նա-ցու-թիւն |
| Վա-րա-նե-ցու-ցա-նել | Աս-տե-ղա-բաշ-խա-կան |
| Հա-ճո-յա-կա-նու-թիւն | Մե-քե-նա-կա-նու-թիւն |
| Փի-լի-սո-փա-յա-կան | Ժա-մա-վա-ճա-ռու-թիւն |
| Տըն-տե-սա-կա-նու-թիւն | Դըժ-ուա-րը-մա-ցու-թիւն |
| Կա-տա-րե-լա-գոր-ծել | Քա-ղա-քա-վա-րու-թիւն |
| Տի-ե-զե-րա-քա-ղաք | Սան-դա-րա-մե-տա-կան |
| Հիւ-րըն-կալ-ա-տուն | Մա-տա-կա-րա-րու-թիւն |
| Ըն-դը-դա-բա-նու-թիւն | Ընդ-րա-դար-ձու-ցա-նել |
| Իշ-խա-նա-սի-րու-թիւն | Նա-խան-ձա-ւո-րու-թիւն |

## ԿԷՏԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Բութ | (՝) | Մակակէտ | (՚) |
| Ստորակէտ | (,) | Պարոյկ | (՞) |
| Միջակէտ | (.) | Երկար | (՜) |
| Վերջակէտ | (:) | Պատիւ | (-) |
| Շեշտ | (՛) | Ընթամնայ | (-) |

## ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ՏԱՂԱՉԱՓԵԱԼ

1. Խնամնից զատ ուրիշ Աստուած չունենաս
2. Կռոց առաջ էլ ծնկան վերայ չդաս:
3. Աստուծոյ անունը 'ի զուր գործ չածես:
4. Ոչ էլ հանգստեան սուրբ օրը պղծես:
5. Քո հօրդ և մօրդ պատուիլը յիշի՛ր:
6. Սպանութիւնից վախցի՛ր ետ քաշուի՛ր:
7. Զգուշի՛ր ամէն պիղծ խօսքից և գործից:
8. Նոյնպէս հեռացի՛ր միշտ գողութիւնից:
9. Սուտ կամ անիրաւ վկայ չդառնաս:
10. Երբէք ընկերիդ բանին չցանկաս:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բոլոր սրտանց Աստուած սիրես,
Քո ընկերիդ էլ քո անձիդ պէս:

Աստուած ստեղծեց երկինքը, երկիրը, ծով և նորանց մէջ եղած բոլոր բաները վեց օրում. և բոլոր ստեղծած բաները բարի էին:

Արեգակը ստեղծեց ցերեկուան լուսաւորելու համար, իսկ լուսինը և աստղերը՝ գիշերին:



Նա ստեղծեց մարդուն և դաշտի անասուններին, երկնքի թռչուններին և ծովի ձկներին:

Աստուած նորանց օրհնում է, որ իւր կամքը կատարեն:

Երբ որ առաւօտը վեր կենաս և երբ որ երեկոյեան անկողին մտնես, նորան գոհութիւն տուր: Աստուած չարերին պիտի կորցնէ, բայց պիտի ների նորանց, որոնք կապաշխարեն և մեղքը կթողեն:

---

## ԱՐԵԳԱԿ

Երբոր արեգակը իւր ոսկեփայլ գլուխը բլուրների քամակից վեր է բարձրացնում, երկինք և երկիրը զուարթանում

են։ Նա իր ուրախալից ճանապարհը շարունակում է, մինչև որ կէսօրին բարձրանում է երկնքին մէջ տեղը, և երկրիս վերայ լոյս և ջերմութիւն է տարածում։ Յետոյ իջնում է դէպի արևմուտք և մտնում է պայծառ ամպերի մէջ։

Կարծում ես թէ արեգակը կորցրի՞ր։ Ո՛չ նա հետևեալ օրը կրկին պիտի ծագի և պայծառ կապոյտ երկնքումը թագաւորի պէս պիտի շարժի։

Ինչպէս որ արեգակը մեր աչքերից ծածկւում է, այնպէս քիչ ժամանակից յետ մենք պիտի գերեզման մտնենք և այս աշխարհիս բաները պիտի չը տեսնենք։ Բայց նա որ մեր Տէրին



սիրում է, պիտի չկորչի, առաւօտեան արեգակից աւելի պայծառ պիտի դուրս գայ գերեզմանից և Աստուծոյ աջ կողմումը յաւիտեան պիտի ծագի։

Ինչպէ՛ս որ արեգակին լոյսը քիչ ժամանակ մնում է մայր մտնելուց յետոյ, այնպէս էլ երբ որ քրիստոնեան մեռնում է, իր բարի գործերին յիշատակը իր ետևը կ'թողէ։ Նա մինչև անգամ իր գնալուց յետոյ լոյս կ'տայ նորանց, որոնք Սիոն գնալու ճանապարհն են որոնում։

"Այն ժամանակը արդարները արեգակի պէս կը ծագին իրեանց Նոր թագաւորութեան մէջ։"

# ԼՈՒՍԻՆ

Լուսինը իր մէջ լոյս չունի,— խաւար է, և իր լոյսը ստանում է արեգակից:

Իր՝ գունտի կէսը միշտ լուսաւորվում է նորան ճառագայթներով, թէև մենք չենք տեսնում նորան: Մենք այնպիսի տեղ ենք, որ լուսինը երբեմն մեզ բոլորված է երևում և յետոյ սկսում է կամաց կամաց փոքրանալ, մինչև որ մէկ բարակ եղջիւր է դառնում, և յետոյ մի առ ժամանակ բոլորը մեր աչքից ծածկվում է: Բայց նա խաւար չէ, այլ դեռ լուսով փայլում է:

Քրիստոնեան էլ ինքն իրեն խաւար է, ինքն իրանից լոյս



չունի, միայն իր Տէրից առած լոյսն է ցոլացնում: Աստուծոյ շնորհքը ծագում է նորա վերայ և նա լուսաւոր է և ամենեքին լոյս է տալիս:

Քրիստոս է նորա լոյս, նորա վերայ հաւատքով նայում է՝ և նորա պէս հոգով աճում է: Կարելի է մենք այնպիսի վիճակի մէջ ենք, որ քրիստոնէին լոյսը միշտ չենք տեսնում. բայց մի համարիր թէ նա խաւար է. դու չես իմանում թէ նորա հոգոյ մէջ ինչ լոյս է ծագում— ինչ հաւատ, ինչ սէր և ինչ յոյս է գործում այնտեղ: Եթէ Յիսուս Քրիստոսին հաւատանք, նա մեզ իմաստութիւն, լոյս և սէր պիտի լինի:

«Ով է ձեր միջումը, որ խաւարում է մին գալիս և լոյս չունի: Թող նա Աստուծոյ անուանը ապաւինէ և իր Աստուծոյ վերայ հաստատ կենայ:

## ԱՍՏՂԱԼԻՑ ԵՐԿԻՆՔԸ

Մէկ պայծառ գիշեր աչքերդ դէպի վեր բարձրացրու, նայիր տես երկինքը ինչպէս լիքն է աստղերով:

Աստուծոյ ժողովուրդը այնքան բազմաթիւ և այնպէս պայծառ են, և այնպէս պիտի երևան սիրոյ երկնքումը Աստուծոյ աջ կողմին:

Դու չես կարողանալ աստղերը համարել, մէկ անթիւ բազմութիւն կախուած կենում են խոր և մութը տարածութեան մէջ, որտեղ որ մեր աչքը չէ



հասնում:

Այնպէս էլ չես կարողանալ Աստուծոյ ժողովուրդը համարել: Այժմ մէկ անթիւ բազմութիւն կայ Գառին աթոռին առաջին շատ ազգերից ժողոված, որոնք գիշեր ցերեկ նորան գովաբանում են.

Իմանում ես որ աշխարհիս մէկ քանի կողմեր կան, որտեղ որ մարդիկների միտքը այնքան խաւար է, որ արեգակը, լուսինը և աստղերը են պաշտում և նորանց Աստուած են ասում: Նորանք չեն ճանաչում այն մեծ Աստուծուն, որ նորանց ստեղծել է:

Երբ որ դէպ 'ի վեր աստղերին նայիս, այս ժողովրդների մտքի կուրութեան վերայ գթա

և շնորհակալութիւն տուր Աս-
տուծոյ որ դու կեանքի ճանա-
պարհը սովորել ես։

«Այս աստղերը իրանց համ-
բոյրքովը կ'ողջամէ և նորանց
իրանց անուններովը կ'կանչէ։»

«Գովաբանեցէ՛ք նորան, արե-
գ'ակ և լուսին, գովաբանեցէ՛ք
նորան դո՛ւք բոլոր լուսաւոր
աստղեր։»

---

## ԾԻԱԾԱՆԻ ԿՈՏԻ

Նայի՛ր, ահաւասիկ մէկ անձ-
րևալից ամպ երկնքին մէջ կա-
խուել՝ կանգնել է և արեգակը
երկնքի միւս կողմից նորա վե-
րայ ծագել է, և մեր աչքերին
այժմ մէկ բարձր գոյն զգոյն
աղեղ է երևում։



Այն ամպը անձրևի կաթիլ-
ներից բաղկացած է, և արե-
գակի ճառագայթները նորանց
վերայ դիպնելով և նորանից ետ
մեր աչքերին դիպչելով ամպին
վերայ ձևացած աղեղի պէս են
երևում։

Ծիածանի զգաստուն վերայ նա-
յիր և նորա ստեղծողը գովիր։
Բարձրեալն Աստուծոյ ձեռքե-
րը նորան կանգնեցրին, և այնտեղ
կենում է նա Աստուծոյ ճշմար-
տութեանը հաւատարիմ վկայ
լինելու։

«Ահաւասիկ ես իմ աղեղը ամ-
պին մէջ կ'դնեմ, և նա մէկ նշան
պիտի լինի իմ մէջ և երկրին
մէջ։ Եւ պիտի լինի որ, երբոր
երկրին վերայ մէկ ամպ բերեմ,

տղեղն էլ պիտի երեւայ ամպին մէջ։,,

"Լուսաթոռի չորս կողմը զմրուխտի նման մէկ ծիածան կար։,,

---

**Մի՛ մոռանար, մի՛ ճաշակիր մի՛ դպչիր։**

**Օղի, Ցքի, Գինի, Լիքոր, Ծխախոտ, Քթախոտ։**

---

### ՔՐԻՍՏՈՍԻ ԿՆԱՆՔԻ

## ՄԷԿ ՔԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

### ՓՐԿՉԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Մի ժամանակ Յիսուս Քրիստոս քեզ պէս մէկ տղայ էր, Նա տղայ դառաւ, որ կարեկից լինի և գթայ տղային և փոքր տղաներին ցոյց տայ, թէ ինչպէս պիտի գործեն նորանք։

Նա իր Մարիամ մօրը հետ ոչխարների մօտ մէկ մսուրի մէջ պառկեց, որովհետեւ իջեւանին մէջ իրանց համար տեղ չկար։ Նա մէկ աղքատ տղայ էր, բայց Աստուծոյ



Որդի էր։

Եւ Աստուած մէկ սուրբ հրեշտակ ուղարկեց, որ գնայ պատմէ այն մարդիկներին, որոնք դաշտումը ոչխարներ էին պահում, թէ Աստուծոյ Որդին երկրիս վերայ ծնաւ։

Այն ժամանակ գիշեր էր, բայց փառք ծագեց նորանց չորս կողմը և ցերեկուայ պէս լոյս եղաւ։

Նորանք էլ վախեցին, բայց հրեշտակը ասաց. "Մի՛ վախենաք, ձեզ համար մեծ ուրախութեան աւետիս բերի. Դաւթի քաղաքումը մէկ տղայ ծնաւ, որ մարդիկներին իրանց մեղքերից պիտի ազատէ,, Ո՜հ, ինչ մեծ աւետիս է այս այն անձերին համար, որոնք իրանց մեղքերին վերայ կ'զղջան և Աստուծոյ բարկութիւնից կ'վախենան։

Այն ժամանակը հրեշտակը սկսեց Աստուծուն փառաբանութիւն երգել. իսկոյն շատ ուրիշ անթիւ հրեշտակների բազմութիւն երկինքիցն իջանելով՝ նորա հետ միացան և ամենը մէկ տեղ երգեցին. "Փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն,,

Ինչ քաղցր և ուրախալի երգ էր այն։ Արդեօ՞ք, սորա նման մէկ երգեցողութիւն

տանեցա՞ւ երբեք երկրիս վերայ. կ՚ուզե՞ս արդեօ՞ք, որ մէկ օր Աստուծոյ փառաբանութեան երգը երգես երկնքումը Հրեշտակներին և սուրբերին հետ։ Սորա համար պէտք է մեղքը հեռացնենք քեզանից, Աստուծուն սիրես և նորա օրէնքին հնազանդուես։

Երբ հովիւները, որ այս երգը հրեշտակներից լսեցին, իրանց հօտերը դաշտումը թողեցին, գնացին մսուրը այն մանուկը տեսնելու և երկրպագութիւն անելու։

Մոգեր էլ եկին հեռու երկրից նորան տեսնելու և Աստուած մէկ պայծառ աստղ ուղարկեց նորանց առաջից նորանց ճանապարհ ցուցնելու։ Երբ հասաւ այն աստղը, որ նորանց առաջնորդում էր, եկաւ և կանգնեցաւ այն տեղի վերայ, որտեղ մանուկն էր, և մոգերը շատ ուրախացան և երբոր տունը մտին, մանուկին երկրպագութիւն արին և նորան իրանց Տէր և Փրկիչ դաւանեցին։

Երբ որ հովիւները և մոգերը վերադարձան, ում որ պատմեցին, ասելով թէ Յիսուս ծնաւ մեր Փրկիչ։

Եւ մանուկը մեծանում էր և իմաստուն ու բարի էր իւր բոլոր խօսքերի և գործքե-



րի մէջ։ Ամեն-բանում Աստուծոյ կամքն էր կատարում, որ իրան ուղարկեց, և Աստուծոյ ու մարդիկներին սիրելի էր։

Թէ որ կուզէք Յիսուսի նման լինել, ականջ դրէ՛ք նորա ասածին, որ ասում է. «Եկէ՛ք և ինձանից սովորեցէ՛ք, որ ես հեզ և խոնարհ եմ սրտով և ձեր հոգիների հանգստութիւն կը գտնէ՛ք»։

## ՔՐԻՍՏՈՍԻ ՓՈՐՁՈՒԻԼԸ

Մենք ամենքս մեղքի մէջ ենք ծնուած և սիրում ենք չարութիւն գործել։ Սատանան այն չարը, որին Աստուած երկինքից արտաքսեց, մեզ փորձում է, որ չար բաների փափագինք, բարկանանք, հպարտանանք և ստութիւն խօսենք։ Աստուծոյ պիտի աղաչենք, որ մեզ շնորհք տայ և փորձութեան ժամանակ մեզ չարից պահէ։

Սատանան ջանք արաւ Յիսուսին էլ փորձելու, որ մեղք գործէ. Այս Քրիստոսի մեծացած ժամանակն էր, երբ որ այս ու այն կողմը պիտի պտտէր մարդիկներին քարոզելու՝ թէ ինքը նրանց փրկելու համար է եկել: Սատանան չէր ուզում, որ Քրիստոս այս բանը անէ, որովհետև ուզում էր, որ մարդիկ մեղքերին մէջ կառչած մնան:

Յիսուս մէկ առանձին անապատ տեղ գնաց աղօթք անելու և այն բանին վրայ միտք անելու, որի համար ուղարկված էր, այսինքն այն մեծ գործքին վերայ, որով պէտք էր մարդիկներին հոգիները փրկէր և նրանց փառքի բերէր: Այնքան



կացաւ այս աղօթքին մէջ, որ սովեցաւ:

Այն ժամանակ սատանան եկաւ և նրան ասաց. „Թէ որ Աստուծոյ Որդին ես և ամենայն իշխանութիւն ունիս, ինչու համար հրաման չես անում քարին, որ հաց դառնայ, որ ուտելիք ունենաս:„

Յիսուս կարող էր այս բանն անել՝ եթէ կամենար, բայց իմանում էր, որ Աստուծոյ կամքը չէր այս բանն անել, ուստի և ինքն չկամեցաւ անել: Նորա համար ասաց սատանային թէ Աստուածաշունչն ասում է որ ոչ թէ հացով միայն պիտի ապրիս, բայց Աստուծոյ խօսքովն էլ: Այն ժամանակը սատանան

ջանք արաւ Յիսուսին նորից փորձելու: Նորա հետ դուրս եկաւ սարի գլուխ գնաց և աշխարհիս մէջ եղած բոլոր մեծ և գեղեցիկ բաները նորա առաջից անցրուց և ասաց. "Այս ամենը քեզ կ'տամ, եթէ ընկած միայն ինձ երկրպագութիւն անես:,, Սատանան իմանում էր որ Յիսուս ո՛չ տուն ունէր, ո՛չ երկիր և ո՛չ էլ փող, նորա համար այս առաջարկութիւնն արաւ որ նորան փորձէ:

Բայց Յիսուս ասաց. "Աստուծոյ օրէնքը ասում է թէ քո Տէր Աստուծոյ երկրպագութիւն անես և միայն նորան պաշտես:,,

Այն ժամանակը սատանան ջանք արաւ երկրորդ անգամ Յի-



սուսին փորձելու: Եւ որովհետև Յիսուս Աստուածաշունչին մէջից նորան խօսեց, նա էլ Սուրբ գրքից մէկ տուն մէջ բերաւ: Տաճարին կտուրին վերայ կանգնեցին, որն որ շատ բարձր էր, և սատանան ասաց Յիսուսին, թէ որ դու ճշմարտապէս Աստուծոյ Որդին ես, կարող ես այստեղից վայր ընկնիլ և չվնասուիլ. որովհետև Աստուածաշունչն ասում է՛ թէ Աստուած պիտի հրամայէ իւր հրեշտակներին, որ քեզ համար հոգս անեն և նորանք պիտի ձեռքի վերայ քեզ բռնեն, որ ոտքարին չզարնես:

Բայց Յիսուս ասաց. "Ետևիցս գնա, սատանայ, որովհետև

Սուրբ գիրքն ասում է, թէ քո Տէր Աստուծոյդ չփորձես։

Եկէք Յիսուսից սովորենք Աստուծոյ հնազանդելու և սատանային ականջ չդնենք, երբ որ ջանք է անում մեզ չարութիւն անել տալու։ Եթէ Յիսուս մէկ գէշ բան արած լինէր, չէր կարող մարդիկներին Փրկիչ լինել։ Բայց նա անբիծ էր և մեղքի արատ չունէր իր վերայ։ Այսպէս նա յարմար էր մարդիկներին մեղքերին համար իր կեանքը տալու։

## ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Յիսուս մէկ անգամ աղօթքի տուն գնաց. և երբոր բոլոր ժողովուրդը նորան էր նայում, նա Աստուածաշունչն առաւ և մի-



ջեցը մէկ տեղ կարդաց, որտեղ Աստուած ասում է՝ թէ իմ Որդիս աշխարհ պիտի ուղարկեմ աղքատներին քարոզելու, հիւանդներին բժշկելու, կոյրերին տեսութիւն տալու, և ազատութիւն նորանց՝ որ կապուած են սրտով։

Եւ երբ որ Յիսուս այս կարդաց, գիրքը փակեց և ասաց. ,,Այսօր այս բանը եղաւ և կը տեսնէք և այս կլսէք։ Եւ քանի որ նա այսպիսի քաղցր խօսքեր էր խօսում, ժողովուրդը աչքը տնկած նորա վերայ նայում էր։

Երանի նորանց, որոնք կարողանում էին այն քաղցր երեսի վերայ նայել և այն սիրոյ խօսքերը լսել, որոնք նորա շրթունքներից կ'բղխէին։ Երանի մեզ էլ. որ Աստուածաշունչ ունինք և կարող ենք կեանքի խօսքերը կարդալ։ Եւ իմանում ենք, որ Յիսուս մեզ տեսնում է և մեզ լսում է և մեզ համար այժմ անում է այն ամէն բանը ինչ որ առաջ երկրիս վերայ լինած տեսողներին համար։

Եթէ միայն մէկ խօսք ասէր, այն շատ կ'կատարուէր։ Շատերը որ հիւանդ

և թշուառութեան մէջ էին, նորա մօտ եկին և նորանից բժշկութիւն ու օգնութիւն խնդրեցին և նա արաւ։

Յիսուսին սիրողներից և նորա ետևից ման եկողներից մէկը Պետրոսն էր։ Պետրոսին տանը նորա զոքանչը ջերմից պառկած էր։ Յիսուս եկաւ, նորա մօտ կանգնեց և հրամայեց ջերմին, որ դուրս գայ և հիւանդը վեր կացաւ և բոլորովին չէր հիւանդացած մարդու պէս ման կը գար։

Այս տեսակ շատ բաներ արաւ Յիսուս։ Ոմանք որ կոյր էին, եկին և աղաչեցին նորան, որ իրանց աչքերը բանայ։ Եւ նա էլ տեսնել տուաւ նորանց, որ առաջ ամենևին տեսած չէին։

Որքան ուրախացած կ'լինէին նորանք լոյսը, երկինքը, խոտը, ծառերը և իրանց սիրականներին երեսները տեսնելու համար։

Երբ որ կոյրերը Յիսուսին աղաղակեցին, որ իրանց օգնէ, նա ասաց նորանց որ եթէ իրան հաւատան ինքն էլ նորանց տեսնել կ'տայ

Ի՞նչ է Քրիստոսի հաւատալը։ Վստահ լինելն է՝ թէ նա կարող է և կամենում է



անել ինչպէս որ ինքն ասաց և թէ կարող է մեր խնդրած բաները պարգևել։

Մեր հոգիները կարօտ են, մեղքից սըրբուին և մաքուր ու սուրբ լինին։ Բայց Յիսուսից մէկը կարող չէ այս բանը մեզ անել։ Նա մեզ համար իւր արիւնը թափեց և եթէ մենք էլ նորան հաւատանք, բոլոր կարօտ եղած բաները մեզ պիտի տայ՝ որովհետև նա լի է գթութենով և նորա զօրութիւնը իւր ողորմութեանը չափ մեծ է։

---

## ԱՅՐԻ ԿՆՈՋ ՈՐԴՈՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Մի անգամ Յիսուս մէկ բազմութեան հանդիպեց, որ մէկ քաղաքից դուրս էին գալիս և մէկ մեռելի դիակ էին տանում։ Գնում էին, որ նորա հողին մէջ թաղեն։ Տղային մայրը նորանց հետ մէկ տեղ գալիս էր շատ տրտմած, որովհետև նա իւր մէկ

հատ զաւակն էր։ Եւ Յիսուս երբ որ տեսաւ նորան, գթաց նորա վերայ և ասաց «Մի լար»։ Այն ժամանակը մեռելին մօտեցաւ և ասաց. «Ով պատանի, քեզ եմ ասում, վե՛ր կաց»։ Եւ նա, որ մեռած էր, վեր կացաւ, նստեց և սկսեց խօսել, և Յիսուս նորան տուաւ իր մօրը և նա նորան հետ տուն գնաց։

Մեծ ուրախութենով լցուեցա՞ւ արդեօք այն մօր սիրտը։ Շատ անգամ չխօսե՞ց արդեօք իր տղային հետ նորա մասին, որ իրանց այնպիսի բան տուաւ։ Երբ որ Յիսուս վերջին օրը մեռելներին «վե՛ր կացէք» ասէ, իցէ թէ մենք էլ նորա ձայնը ուրախութենով լսենք։ Ո՜հ,



ո՛րքան երանելի են նորանք, որ ամպերի մէջ պիտի դիմաւորեն և նորա հետ երկինքը գնան։

## ՔՐԻՍՏՈՍԻ ԾՈՎԻ ԵՐԵՍԻՆ ՄԱՆԳԱԼԸ

Քրիստոսի աշակերտներէն մէկ քանիսը նաւակով ծովի վերայ գնում էին ձուկ բռնելու։ Մի անգամ երբ Յիսուս նորանց հետ էր, բոլոր գիշերը աշխատեցին և չկարողացան մէկ ձուկ բռնել։ Բայց Յիսուս նորանց ցոյց տուաւ թէ ո՞րտեղ պիտի ձգեն ուռկանը և այն ժամանակը ձուկնով լիքը դուրս քաշեցին նորան։ Ծովին մէջի բոլոր ձկները նորանն են և նա իմանում է թէ որտեղ են նորանք։

Մի անգամ այս մարդիկը մէկ նաւում էին և Յիսուս նորանց հետ չէր, քամին էլ շատ սաստիկ փչում էր։ Նորանք էլ վախենում էին, որ նաւը պիտի խորտակուի և իրանք էլ պիտի կորչէին։

Յետոյ տեսին, որ մէկը ջրի երեսովը դէպի իրանց գալիս էր։ Այս բանը աւելի վախեցրաւ նորանց, որովհետև անօրինակ բան

էր որ մէկը ջրի երեսին ման գայ և չընկղմի։

Բայց նա, որ ջրի երեսին էր, խօսեց և ասաց. քա՛ջ եղէք՝ ես եմ, մի՛ վախենաք։ Այն ժամանակը ճանաչեցին Յիսուսի ձայնը և շատ ուրախացան, որ իրանց մօտն է գալիս նաւին մէջ։ Եւ քամին էլ չ՚փչեց և նաւը շուտով ցամաքը հասաւ։

Մէկ ուրիշ անգամ էլ, երբ որ մէկ մեծ փոթորիկ կար, Յիսուս նաւին մէջ կ՚քնէր. և նորանք եկին նորան զարթնեցնելու, որովհետև գիտէին նորա զօրութիւնը և վստահ էին, որ կարող է իրանց օգնել։

Այսպէս ասացին նորան. Տէ՛ր, մեզ փրկի՛ր, եթէ ո՛չ պիտի ընկղմենք և պիտի մեռնինք։ Եւ Յիսուս վերկացաւ և ասաց. ինչո՞ւ վախենում էք։ Յետոյ հրամայեց քամուն, որ դադարէ և ալիքներին որ հնազանդուին. և իսկոյն յանկարծ ամէն բան խաղաղուեցաւ։ Եւ նորանք որ այս բանս տեսին, ասացին. ‹‹Ո՞վ կարող է լինել, որին քամիները և ծովը հնազանդում են,,։

Յիսուս որ կարողանում է հանդարտեցնել ալիքները. կարող է խաղաղութիւն տալ մեր մտքերին։ Կարող է հեռու պահել մեզ նախանձութիւնից, բարկութիւնից և վախից



և այն ամէն բաներից, որոնք մեր ուրախութիւնը և խաղաղութիւնը խանգարում են։ Երբ որ նեղութեան մէջ լինինք, կարող է մեր հոգուն մէկ քաղցր խօսք խօսել և մեզ խաղաղացնել։ Որքան քաղցր և սիրելի բան է Յիսուսի մօտ ապրելը։ Թո՛ղ այն ժամանակը շուտով գայ, երբ որ բոլոր աշխարհը պիտի ճանաչէ և սիրէ նորան։

## ԿԱՌԱՎԱՐՉԻ ԱՂՋԻԿԸ

Մի անգամ Յիսուսի մօտ մէկ մարդ եկաւ մեծ տրտմութեան մէջ։ Նա ժողովրդին մէջ մէկ կառավարիչ էր, բայց հարստութիւնը և պատիւը մարդուս նեղութիւններից, ցաւից և մահից չեն կարող պահել։ Երբ տեսաւ Յիսուսին, նորա ոտները ընկաւ և ասաց. իմ փոքրիկ աղջիկս չարաչար հիւանդ է. վախենում եմ թէ մեռնի։ Աղա-

չում եմ քեզ, և ե՛կ և քո ձեռքդ նորա վերայ տի՛ր, որ ապրի։

Նոյն րոպէին մէկ ուրիշը եկաւ տանիցը և ասաց մեռաւ. պէտք չէ ասես նորան որ գայ, էլ գալը օգուտ չանել։ Նորանք հաւատում չէին որ Յիսուսը իշխանութիւն ունի միանգամ մեռածներին նորից յարուցանելու։ Բայց Յիսուս ասաց նորան հօրը. "Մի՛ վախենար, միայն հաւատա՛"։

Եւ վերկացաւ նորա հետ գընաց տունը, և երբոր մտաւ այնտեղ՝ որտեղ աղջիկը մեռած պառկած էր, նորա ձեռքիցը բռնեց և ասաց "Վե՛ր կաց։" Եւ նա վերկացաւ և ման էր գալիս, որպէս թէ ամենևին



մեռած կամ հիւանդացած չէր։

Որքան բարերար է Յիսուս նորանց, որոնք իրան սիրում են։

Ինչ որ ճշմարտութիւնով է,
Ինչ որ պարկեշտութիւնով է,
Ինչ որ արդարութիւնով է,
Ինչ որ մաքրութիւով է,
Ինչ որ սիրով է,
Այն բաները խորհեցէ՛ք։

Փիլիպ. Դ. 8

ՓՈՔՐ ՏՂԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ՀԵՇՏ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հ. Ո՞վ էր առաջին մարդը։
Պ. Ադամ։
Հ. Ո՞վ էր առաջին կինը։
Պ. Եւայ։
Հ. Ո՞վ էր առաջին մարդասպանը։
Պ. Կայէն։
Հ. Ո՞վ էր առաջին մարտիրոսը։
Պ. Աբէլ։

Հ. Ո՞վ էր ամենից շատ ապրող մարդը։
Պ. Մաթուսաղա։
Հ. Ո՞վ շինեց տապանը։
Պ. Նոյ։
Հ. Ո՞վ էր ամենից հաւատարիմ մարդը։
Պ. Աբրահամ։
Հ. Ո՞վ էր ամենահեզ մարդը։
Պ. Մովսէս։
Հ. Ո՞վ էր ամենից համբերող մարդը։
Պ. Յոբ։
Հ. Ո՞վ ըմբշամարտեցաւ Աստուծոյ հրեշտակին հետ։
Պ. Յակոբ։
Հ. Ո՞վ տարաւ Իսրայէլացիք Քանանու երկիրը։
Պ. Յեսու։
Հ. Ո՞վ էր ամենից ուժով մարդը։
Պ. Սամփսոն։
Հ. Ո՞վ սպանեց Գողիաթին։
Պ. Դաւիթ։
Հ. Ո՞վ էր ամենից իմաստուն մարդը։
Պ. Սողոմոն։
Հ. Ո՞վ չվախցաւ առիւծների գուբը։
Պ. Դանիէլ։
Հ. Ո՞վ մեռաւ մարդիկներին փրկելու-



համար։
Պ. Յիսուս Քրիստոս։
Հ. Ո՞վ է Յիսուս Քրիստոս։
Պ. Աստուծոյ Որդին։
Հ. Ո՞վ էր Քրիստոսի մայրը։
Պ. Մարիամ։
Հ. Ո՞վ էր սիրելի աշակերտը։
Պ. Յովհաննէս։
Հ. Ո՞վ մատնեց իր Տէր Փրկիչը։
Պ. Յուդան։
Հ. Ո՞վ ուրացաւ իր Տէրին։
Պ. Պետրոս։
Հ. Ո՞վ մեռաւ մատնութեան սուտ խօսելուն համար։
Պ. Անանիա և Սափիրա։
Հ. Ո՞վ էր առաջին քրիստոնեայ մարտիրոսը։
Պ. Ստեփաննոս։
Հ. Ո՞վ էր հեթանոսների գլխաւոր առաքեալը։
Պ. Պօղոս։

## ՏՂԱՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հ. Աշխարհը՞ ասել, տղա՛ս, ո՞վ ստեղծեց

ձեզ։

Պ. Այն մեծ Աստուածը, որ երկինք ու երկիրը ստեղծեց։

Հ. Աստուած ի՞նչ է անում ձեզ համար։

Պ. Գիշեր և ցերեկ ինձ չարիքներից պահում է. և միշտ ինձ բարիք է անում։

Հ. Բայց դուք ի՞նչ պիտի անէք այն մեծ Աստուծուն, որ ձեզ համար այդքան բարիք է անում։

Պ. Նախ և առաջ պէտք է սովորեմ նորան ճանաչելը և յետոյ ամէն բան անել նորան հաճելի լինելու։

Հ. Ի՞նչը մեզ է սովորեցնում մեզ Աստուած իրան ճանաչել ու սիրել։

Պ. Իւր Սուրբ խօսքին մէջ, որ Աստուածաշունչումը գրուած է։

Հ. Իմանո՞ւմ ես թէ Աստուած ի՞նչ է։

Պ. Աստուած հոգի է, և թէպէտ մենք չենք կարողանում նորան տեսնել, բայց նա տեսնում է և իմանում է ամէն բան և կարող է ամէն բան անել։

Հ. Ի՞նչ պիտի անէք Աստուծոյ հաճելի լինելու համար։



Պ. Ն'ւ դէպ ՚ի Աստուած և դէպ ՚ի մարդիկ ունեցած պարտաւորութիւններս կատարեմ։

Հ. Ի՞նչ են ձեր առ Աստուած ունեցած պարտաւորութիւնները։

Պ. Առ Աստուած պարտաւորութիւնս է վախենալ նորանից և պատուել նորան, սիրել և ծառայել նորան. աղօթք անել նորան և գովաբանել նորան։

Հ. Ի՞նչ են առ մարդիկ ունեցած պարտաւորութիւնները։

Պ. Առ մարդն ունեցած պարտաւորութիւններս են՝ ծնողներիս հնազանդուիլ, միշտ ճշմարիտ խօսել և բարկեշտ ու ամենին բարերար լինել։

Հ. Ի՞նչ բարիք կը յուսաս Աստուծոյ հաճելի լինելովդ։

Պ. Այն ժամանակը Աստուծոյ զաւակը պիտի լինիմ և Աստուած էլ իմ հայր ու բարեկամս պիտի լինի յաւիտեան։

Հ. Բայց ի՞նչ կյուսաս, եթէ որ Աստուծոյ չվախենաս, և ոչ էլ նորան հաճելի լինել խնդրես։

Պ. Այն ժամանակը չար որդի պի-

տի լինիմ և բարձրեալն Աստուած ինձ վե-րայ պիտի շատ բարկանայ։

Հ. Ինչո՞ւ համար ես վախենում Աստուծոյ բարկութիւնից։

Պ. Որովհետև նա կարող է մարմինս մեռցնել և հոգիս թշուառացնել։

Հ. Բայց արդեօք մէկ բան արած չե՞ս ամենևին Աստուած բարկացնելու։

Պ. Այո, շատ վախենում եմ, շատ անգամ մեղանչել եմ Աստուծոյ դէմ և ար-ժանի եմ եղել բարկութեանը։

Հ. Ի՞նչ ես ուզում ասել «Աստուծոյ դէմ մեղանչել եմ» ասելով։

Պ. «Աստուծոյ դէմ մեղանչել եմ», ասելով՝ ուզում եմ ասել այնպիսի բան եմ արել, որ ինքը արգելում է. կամ այն բա-նը չեմ արել, որ ինքը պատուիրում է։

Հ. Բայց ի՞նչ պիտի անես Աստուծոյ բարկութիւնից ազատուելու համար, որին դու մեղ-քերդ քեզ արժանի արիր։

Պ. Պիտի տրտմիմ մեղքերիս համար Աստուծոյ պիտի աղօթք անեմ՝ անցեալին համար թողութիւն տալու, և նորանից յետոյ նորան աւելի լաւ ծառայեմ։



Հ. Աստուած քեզ կը ների՞, եթէ որ նորան աղօթք անես։

Պ. Յուսամ որ կը ների, եթէ նո-րա ողորմութեանը ապաւինիմ, Յիսուս Քրիստոսի արդեանց և չարչարանացը հա-մար։

Հ. Իմանո՞ւմ ես ով է Յիսուս Քրիս-տոս։

Պ. Նա Աստուծոյ Որդին է, որ երկնքիցը վայր իջաւ մեզ մեր մեղքերից և Աստուծոյ բարկութիւնից փրկելու։

Հ. Ի՞նչ արաւ Քրիստոս մարդիկներին փրկելու համար։

Պ. Աստուծոյ օրէնքին ինքն հնա-զանդուեցաւ և սովորցրաւ մեզ որ մենք էլ հնազանդուենք։

Հ. Բայց ի՞նչ քաշեց Քրիստոս մար-դիկներին փրկելու համար։

Պ. Նա մեռաւ մեղաւորներին հա-մար, որ Աստուծոյ օրէնքը քանդել և ի-րանք մեռնելու արժանացել էին։

Հ. Ո՞րտեղ է հիմայ Յիսուս Քրիստոս։

Պ. Նա դարձեալ կենդանի է և եր-կնքումը կանգնած է տեղ պատրաստելու

այն ամենին համար, որոնք Աստուծոյ ծառայում են և իւր Որդի Յիսուսը սիրում են:

Հ. Դու ինքդ քեզանից կարո՞ղ ես սիրել և ծառայել Աստուծոյ:

Պ. Ո՛չ, ես ինքս ինձանից չեմ կարող անել, բայց Աստուած պիտի օգնէ իւր Սուրբ Հոգովը, թէ որ նորան խնդրեմ:

Հ. Յիսուս Քրիստոս մէկ էլ պիտի գա՞յ երբէք:

Պ. Քրիստոս նորից պիտի գայ, և ինձ ու բոլոր աշխարհս պիտի կանչէ հաշիւ պահանջելու բոլոր մեր արած բաներին համար:

Հ. Այս հաշիւը ի՞նչ բանի համար պիտի պահանջուի:

Պ. Որ Աստուծոյ զաւակները, ինչպէս որ չարերն էլ, իրանց գործքերին համեմատ ընդունեն:

Հ. Ի՞նչ պիտի լինիս դու եթէ որ չար գտնուիս:

Պ. Թէ որ մեղաւոր լինեմ, պիտի ուղարկուիմ դժոխքին յաւիտենական կրակին մէջ—ամբարիշտ և թշուառ արարածներին մէջ:



Հ. Բայց ո՞րտեղ պիտի գնաս եթէ որ Աստուծոյ մէկ սիրելի զաւակը լինիս:

Պ. Թէ որ Աստուծոյ սիրելի մէկ զաւակ լինեմ, պիտի գնամ երկինքը և այն տեղ Աստուծոյ ու Քրիստոսի հետ յաւիտեանս պիտի բնակուիմ, որին' փառք և գոհութիւն յաւիտեանս ամէն:

---

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Որոնց պատասխանները Սուրբ Գրքից քաղուած վկայութիւններով է գրուած:

1. Ո՞վ ստեղծեց քեզ:

Տէր Աստուած գետնի հողեցը շինեց մարդը: Ծննդ. Բ. 7:

2. Ի՞նչպէս ստեղծուեցար դու:

Ահաւոր ու զարմանալի կերպով ստեղծուեցայ: Սաղ. ՃԼԹ. 14:

3. Ի՞նչ բանի համար ստեղծուեցար:

Փառաւորեցէ՛ք Աստուծուն ձեր մարմիններին և հոգիներին մէջ, որ Աստուծոյ են: Ա. Կորնթ. Զ. 20:

4. Աստուած ի՞նչ է:

Աստուած հոգի է։ Յովհ. Դ. 24։

5. Ի՞նչ է Աստուծոյ յատկութիւնը։

Աստուած սէր է։ Ա. Յովհ. Դ. 8։

6. Արդար եւ ճշմարիտ էլ է՞։

Աստուած հաւատարիմ է և անիրաւութիւն չունի, նա արդար և ուղիղ է։ Բ. Օրին. ԼԲ. 4։

7. Աստուած ո՞ր մարդկանց է սիրում։

Սիրում եմ ինձ սիրողներին։ Առակ. Ը. 17։

8. Աստուած անապաշխար մարդիկներին սիրում է՞։

Աստուած մեղաւորին վերայ ամէն օր բարկացած է։ Սաղ. Է. 11։

9. Աստուած [illegible] էլ պէտք յիշէ՞։

Եւ քո Ստեղծիչդ քո երիտասարդութեան օրերումը յիշիր։ Ժող. ԺԲ. 1

10. Աստուած կարո՞ղ է մեզ չտեսնել։

Մէկը կարող է ծածուկ տեղերում պահուիլ, որ ես նորան չտեսնեմ, ասում է Տէրը։ Երեմ. ԻԳ. 24։

11. Աստուած ամէն տեղ է՞ եւ ամէն բան տեսնո՞ւմ է։



Աստուծոյ աչքերը ամէն տեղ չարերին և բարիներին դիտում են։ Առակ. ԺԵ. 3

12. Աստուած բոլոր մտածմունքները գիտո՞ւմ է։

Բոլորովին խօսք չկայ իմ լեզուիս վերայ, ահա, ով Տէր, դու ամէնը իմանում ես։ Սաղ. ՃԼԹ. 8։

13. Աստուած մեր ամէն խորհուրդները իմանո՞ւմ է։

Ես ձեր մտքից անցկացածը իմանում եմ։ Եզեկ. ԺԱ. 5։

14. Աստուածաշունչը Աստուծոյ խօսք է՞։

Բոլոր Սուրբ Գիրքը Աստուծոյ շունչն է։ Բ. Տիմ. Գ. 16։

15. Սուրբ Գրքերը ի՞նչ օգուտ կանեն մեզ։

Սուրբ գրքերը իմանում ես, որոնք կարող են քեզ իմաստուն անել փրկելու։ Բ. Տիմ. Գ. 15։

16. Պէտք հրամայո՞ւած է Աստուածաշունչը կարդալ։

Գրքերը քննեցէ՛ք։ Յովհ. Ե. 39։

17. Աստուածաշունչը մեզ համար ի՞նչ է ընթեռնելու։

Իմ ոտներիս ճրագ է և իմ շաւիղ-

ներիս լոյս։ Սաղ. ՃԺԹ. 105։

18. Թէ որ Աստուծոյ խօսքը լսես, նա քեզ մեղքէն կը պահէ՞։

Իմ սրտիս մէջ պահեցի քո խօսքերդ, որ չմեղանչեմ քեզ դէմ։ Սաղ. ՃԺԹ. 11։

19. Աստուած Աստուածաշունչին մէջ ի՞նչ է խոստանում մանր տղաներին։

Ինձ կանուխ փնտռողները ինձ կը գտնեն։ Առակ. Ը. 17։

20. Աստուած ինչ է՞ խոստանում Աստուածաշունչում նեղութեան մէջ ընկող քրիստոնեաներին։

Նեղութեան մէջ նորա հետ պիտի լինիմ։ Սաղ. ՂԱ. 15։

21. Ի՞նչ է խոստանում հիւանդութեան մէջ ընկողին։

Տէրը նորան ոյժ պիտի տայ տկարութեան անկողնին մէջ. նորա ամէն անկողինը պիտի դարձնես նորա հիւանդութեան ժամանակը։ Սաղ. ԽԱ. 3։

22. Ի՞նչ է խոստանում քրիստոնեաներին նորա մահուան մէջ։

Թէ և մահուան ստուերի ձորումը էլ ման գամ, չարից պիտի չվախենամ.



որովհետև դու ինձ հետ ես, քո ցուպդ և գաւազանդ՝ նորանք ինձ պիտի մխիթարեն։ Սաղ. ԻԳ. 4։

23. Ի՞նչ խոստմունք է տուած աղքատութեան մէջ ընկողին։

Տէրը իմ հովիւս է, ես մէկ բանի կարօտութիւն պիտի չունենամ։ Սաղ. ԻԳ. 1։

24. Ի՞նչ խոստմունք է տուած որբերին։

Որբերին հայրը և որբ այրիների դատաւորը Աստուած է իր սուրբ բնակարանումը։ Սաղ. ԿԸ. 5։

25. Ի՞նչ է խոստանում ծերերին։

Մինչև ձեր ծերութիւնը անգամ ես նոյն եմ. և մինչև ձեր ալևորութիւնը ես ձեզ պիտի քաշեմ, ես ստեղծեցի և ես պիտի վերցնեմ, ես պիտի քաշեմ, և պիտի ազատեմ։ Եսայ. ԽԶ. 4։

26. Ամէն բան օգո՞ւտ է տուած Աստուծոյ զաւակներին։

Ամէն բաներ բարւոյ գործակից են լինում նորանց՝ որոնք Աստուծոյ սիրում են։ Հռովմ. Ը. 28։

27. Մեր բոլոր օրհնութիւնները ուստի՞ են գալիս։

Ամէն բարի տուրք և ամէն կատարեալ պարգև վերևից է և լուսոյ Հօրիցն է վէր գալիս: Յակ. Ա. 17:

28. Մեղաւո՞ր ես դու:

Ամենքը մեղք գործեցին և Աստուծոյ փառքիցը պակաս են: Հռով. Գ. 23:

29. Մեղքը ինչպէ՞ս աշխարհ մտաւ:

Մէկ մարդից մեղքը աշխարհ մտաւ: Հռով. Ե. 12:

30. Մեղաւորները դժոխք պիտի գնա՞ն:

Ամբարիշտները դժոխք պիտի դառնան: Սաղ. Թ. 17:

31. Հոգին ի՞նչպէս կարող է փրկուիլ:

Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին և դու պիտի փրկուիս: Գործ. ԺԶ. 31:

32. Ի՞նչու համար Տէր Յիսուս աշխարհ եկաւ:

Քրիստոս Յիսուս եկաւ աշխարհ մեղաւորները փրկելու: Ա. Տիմ. Ա. 15:

33. Քրիստոս Աստուած է:

Որ ինքն է ամենի վերայ Աստուած օրհնեալ յաւիտեան: Հռով. Թ. 5:

34. Քրիստոս յաւիտենից է:

Նա սկզբից Աստուծոյ մօտն էր: Յովհ. Ա. 2:



35. Ամէն բան Քրիստոս ստեղծեց:

Ամէն բան նորանով եղաւ առանց նորան մէկ բան չեղաւ, ինչ որ եղաւ: Յովհ. Ա. 3:

36. Քրիստոս անփոփոխ է:

Յիսուս Քրիստոս նոյն էր երէկ և այսօր և յաւիտեան: Եբր. ԺԳ. 8:

37. Քրիստոս ամէն բան գիտէ՞:

Տէր, դու ամէն բան գիտես: Յովհ. ԻԱ. 17:

38. Քրիստոս ամէն բան կարո՞ղ է անել:

Ամէն իշխանութիւն ինձ տրուեցաւ երկնքի և երկրի մէջ: Մատթ. ԻԸ. 18:

38. Քրիստոս երկրպագելի է՞ որպէս Աստուած:

Որ ամէնքը պատուեն Որդուն, ինչպէս Հօրը պատւում են: Յովհ. Ե. 23:

40. Աշակերտները Քրիստոսին երկրպագութիւն արի՞ն:

Եւ երբոր նորան տեսին, երկրպագութիւն արին նորան: Մատթ. ԻԸ. 17:

41. Քրիստոս մեղքերի թողութիւն տալի՞ս է:

Բայց որպէս զի գիտենաք՝ թէ Որ-

դին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վերայ մեղքերին թողութիւն տալու (այն ժամանակը անդամալոյծին ասաց) վե՛ր կաց մահիճդ առ եւ գնա՛ տունդ։ Մատթ. Թ. 6։

42. Բայց 'ի Աստուծոյ մէկը կրնա՞յ է մեղքերուն թողութիւն տալ։

Ո՞վ է կարող մեղքերին թողութիւն տալ, բայց միայն Աստուած։ Մարկ. Բ. 7։

43. Հայր Աստուածը ի՞նչ է տուած Քրիստոսի համար։

Քո աթոռդ, ո՛վ Աստուած, յաւիտեանս յաւիտենից կայ։ Եբր. Ա. 8։

44. Քրիստոս Աստուծոյ Որդին կոչուա՞ծ։

Աստուած մարմնով յայտնուեցաւ։ Ա. Տիմ. Գ. 16։

45. Իւր մարդասիրութիւնները հաւատալով հաստատե՞ց։

Գոնէ գործքերին համար ինծի հաւատացէ՛ք։ Յովհ. ԺԴ. 11։

46. Իւր հրաշքները շա՞տ էին։

Յիսուս ուրիշ նշաններ էլ արաւ իւր աշակերտներին առաջին, որ այս գրքիս մէջ գրուած չեն։ Յովհ. Ի. 30։



47. Ի՞նչ գործով պարապեցաւ երկրիս վերայ։

Ման եկաւ բարութիւններ անելով։ Գործ. Ժ. 38։

48. Քրիստոս մի միայն փրկի՞չ է։

Քանզի 'ի սորանից ուրիշ մէկ անուն չկայ երկնքին տակին մարդիկներին մէջ տուած, որ նորանով կարող լինինք փրկուելու։ Գործ. Դ. 12։

49. Քրիստոս մի միայն միջնո՞րդ է։

Մէկ միջնորդ (կայ) Աստուծոյ եւ մարդիկներին մէջ—Յիսուս Քրիստոս մարդը։ Ա. Տիմ. Բ. 5։

50. Քրիստոս մեր բարեխօ՞սն է։

Հօրը մօտ բարեխօս ունինք Յիսուս Քրիստոս արդարը։ Ա. Յովհ. Բ. 1։

51. Քրիստոս մեզ համար բարեխօսութիւն անո՞ւմ է։

Որ նաեւ ինքն էլ մեզ համար բարեխօսութիւն է անում։ Հռոմ. Ը. 34։

52. Քրիստոս փոքր տղաներին սիրո՞ւմ է եւ ուզո՞ւմ է իրան մօտ գան նորանք։

Յիսուս ասաց, թողլ տուէք այդ փոքր տղաներին եւ մի արգելէք գորանց

լինի մօտ գալուցը: Մատթ. ԺԹ. 14:

53. Դու չար սիրտ ունի՞ս:

Սիրտը ամէն բանից աւելի խաբեբայ և խիստ չար է: Երեմ. ԺԷ. 9:

55. Ի՞նչ է Աստուծոյ օրէնքին վճիռը մեղաւորների դէմ:

Այն անձը, որ մեղք է գործում, նա պիտի մեռնի: Եզեկ. ԺԸ. 20:

56. Ուրեմն ի՞նչպէս կարող ես երկինք գնալ:

Եթէ մէկ մարդ կրկին չը ծնուի, չէ կարող Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել: Յովհ. Գ. 3:

57. Ի՞նչ է կրկին ծնուելը:

Ձեր մտքի հոգովը նորոգուիլը: Եփես. Դ. 23:

58. Ի՞նչպէս կարող ենք իմանալ մէկին կրկին ծնուած լինելը:

Այն ամէնը որ Աստուծուց ծնուած է, աշխարհքին յաղթում է: Ա. Յովհ. Ե. 4:

59. Սուրբ Հոգին ի՞նչ գործ է անում մեր կրկին ծնուելու մէջ:

Եթէ մէկ մարդ ջրից և Հոգուց չը ծնուի, չէ կարող Աստուծոյ թագաւորու-



թիւնը մտնել: Յովհ. Գ. 5:

60. Սուրբ Հոգւոյն նորոգութեան մէջ ի՞նչ կայ:

Մեզ փրկեց կրկին ծնվելու աւազանի միջոցովը և Սուրբ Հոգու նորոգելովը: Տիտ. Գ. 5:

61. Հոգին Սուրբ Աստուած կոչուա՞ծ է Սուրբ Գրքումը:

Ինչո՞ւ սատանան քո սիրտը լցրաւ, որ դու Սուրբ Հոգուն սուտ խօսես, ո՛չ թէ մարդկանցին սուտ խօսեցիր, այլ Աստուծոյ: Գործ. Ե. 3, 4:

62. Ի՞նչ են Հոգու պտուղները:

Հոգու պտուղները սոքանք են. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն: Գաղ. Ե. 22, 23:

63. Կարո՞ղ է մէկ մարդ քրիստոնեայ լինել, առանց իւր գործերովը յայտնելու թէ նա քրիստոնեայ է:

Իրանց պտուղներից պիտի ճանաչէք նորանց: Մատթ. Է. 20:

64. Պարտակա՞ն ես աղօթք անել:

Պէտք է ամէն ժամանակ աղօթք ա-

նել: Ղուկ. ԺԲ. 1:

65. Բոլոր չորս բաների համար աղօթք պիտի անենք:

Ամեն բանի մէջ աղօթքով և աղաչանքով, գոհութեան հետ մէկ տեղ ձեր խնդրուածքը Աստուծոյ յայտնի լինի: Փիլիպ. Դ. 6:

66. Ո՞ւմ անունով պիտի աղօթք անենք:

Իմ անունովս, ինչ որ խնդրէք պիտի կատարեմ այն: Յովհ. ԺԴ. 13:

67. Քրիստոս ասո՞ւմ է մեր խնդրուածները պիտի պարգևէ:

Խնդրեցէ՛ք և ձեզ պիտի տրուի: Մատթ. Է. 7:

68. Աղօթքիս պատասխանը պիտի ստանա՞նք մենք որ մեղքի մէջ ենք:

Թէ որ սրտումս անօրէնութիւն տեսնէի Տէրը պիտի չլսէր ինձ: Սաղ. ԿԶ. 18:

69. Ինչպէս որ մեզ համար այնպէս էլ ուրիշներին համար պիտի աղօթք անենք:

Արդ՝ աղաչում եմ, ամեն բանից առաջ աղօթք անել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն, ամեն մարդիկների համար: Ա. Տիմ. Բ. 1:



70. Աստուած ամբարիշտ խօսքերը արգելե՞լ է:

Քո Աստուծոյ անունը զուր տեղը բերանդ չառնես: Ելից. Ի. 7:

71. Աստուած ի՞նչ պիտի անէ նորանց, որ ամբարիշտ խօսքեր են գործ ածում:

Տէրը իւր անունը զուր տեղը բերանը առնողին՝ անմեղ պիտի չհամարէ: Ելից. Ի. 7.

72. Ինչ և իցէ երդում անելը մեղք է՞:

Երդում չանէ՛ք, երկնքի վերայ, ոչ երկրի վերայ, ո՛չ էլ մէկ ուրիշ երդում: Յակ. Ե. 12:

73. Շաբաթ օրը ի՞նչպէս պիտի պահենք:

Հանգստութեան օրը միտդ բե՛ր, նորան սուրբ պահելու համար: Ելից. Ի. 8:

74. Ո՞ւմ համար եղաւ շաբաթը:

Շաբաթը մարդին համար եղաւ:

75. Ե՞րբ հաստատուեցաւ շաբաթը:

Աստուած . . . . եօթներորդ օրը հանգստացաւ իւր արած բոլոր գործքերից և օրհնեց եօթներորդ օրը և սրբեց նորան: Ծննդ. Բ. 2, 3:

76. Ի՞նչ խոստացաւ Աստուած Իսրայէ-

ըսուած են որ շաբաթը սուրբ պահեն։

Եթէ շաբաթը՝ իմ սուրբ օրս՝ քո ցանկութիւնը կատարելուց ետ դարձնես և շաբաթը՝ քո ուրախութիւնդ, և Աստուծոյ նուիրած օրը՝ պատուական անուանես և նորան պատուես, քո ճանապարհներին չհետևելով, քո ցանկութիւնդ չկատարելով և դատարկ խօսք չխօսելով, այն ժամանակ Տէրովը պիտի ուրախանաս, և քեզ երկրիս բարձր տեղերը պիտի հանեմ և քո հօր Յակոբին ժառանգութիւնը քեզ պիտի ուտացնեմ. որովհետև Տէրի բերանը խօսեց։ Եսայ. ԾԸ. 13,14։

77. Տղաները պարտակա՞ն են իրանց ծնողներին հնազանդվելու։

Որդիք, ամեն բանի մէջ հնազանդ եղէք ձեր ծնողներին, որովհետև այն է Աստուծոյ առաջին հաճելի։ Կող. Գ. 20։

78. Ի՞նչ է ասում Աստուածաշունչը այն տղաների համար, որոնք իրանց ծնողներին չեն յարգում։

Անիծեալ լինի նա, որ իւր հօրը կամ մօրը դէմ հայհոյութիւն է անում։ Բ. Օրէն. ԻԷ. 16։



79. Ծերերի հետ պատո՞ւով պիտի վարուիս։

Ալևորին առաջին կանգնի՛ր և ծերին պատուիր։ Ղև. ԺԹ. 32։

80. Պէ՞տք է որ ծնողները իրանց տղաներին թոյլ տան որ չարութիւն անեն, կամ թէ արդարութեան ճանապարհի մէջ նորանց պիտի կրթե՞ն։

Կրթի՛ր մանուկին իւր ճանապարհը սկսած ժամանակը, որ իւր ծերութեան ժամանակն էլ նորանից չ'խոտորուի։ Առակ. ԻԲ. 6։

81. Աստուած պատուիրո՞ւմ է ծնողներին որ իրանց տղաներին պատժեն նորանց չարութիւն արած ժամանակը։

Քանի որ յոյս կայ տղայդ խրատի՛ր և նորա աղաղակին ականջ մի՛ դնիր։ Առակ. ԺԹ. 18։

82. Աստուած ի՞նչ արաւ Հեղիին իւր որդիքը չարութիւնից չ'զսպելու համար։

Իրան իմացրել եմ, որ նորա տունը մինչև յաւիտեան պիտի դատեմ՝ իւր իմացած անօրէնութեան համար, որովհետև նորա որդիքը իրանց վերայ անէծք են բերում և նա նորանց չէ յանդիմանում։ Ա.

83. Պատուիրա՞ծ է որ մարդասպանութիւն չանենք։

Սպանութիւն մի՛ անիր։ Ելից. Ի. 13։

84. Ի՞նչ է ասում Աստուածաշունչը իւր եղբօր ատողին համար։

Ամենայն ով որ իւր եղբօրը ատում է, մարդասպան է։ Ա. Յովհ. Գ. 15։

85. Կարո՞ղ ենք անհաշտութիւն կամ ոխ պահել ներքուստ։

Արեգակը ձեր բարկութեան վերայ մայր չ'մտնէ։ Եփես. Դ, 26։

86. Չարին չար ա՞րդեօք հատուցանենք։

Մի՛ ասիր թէ նա ինձ ինչպէս արաւ ես էլ նորան այնպէս պիտի անեմ։ Առակ. ԻԴ. 29։

87. Աստուածաշունչը անվայել խօսքերը արգելո՞ւմ է։

Բոլորովին ձեր բերանից մէկ ապականուած խօսք դուրս չ'գայ։ Եփես. Դ. 29։

88 Ի՞նչ է ասում մեր Փրկիչը սրտով մաքուր լինողների համար։

Երանի նորանց, որ սրտով մաքուր են, որովհետեւ նորանք պիտի Աստուծուն տեսնեն։ Մատ. Ե. 8.



89. Արգելա՞ծ է ձեզ չ'պատկանած բան առնել։

Գողութիւն մի՛ անիր։ Ելից. Ի. 15։

90. Սուտ կշիռները և չափերը արգելուա՞ծ են։

Նենգութեան կշիռը Աստուծոյ առաջին պիղծ է։ Առակ. ԺԱ. 1։

91. Խաբեբայութիւնը արգելուա՞ծ է։

Չլինի թէ այդ բանի մէջ մէկը չափից անցնէ և իւր եղբօրը զրկէ։ Ա. Թեսաղ. Դ. 6։

92. Պարտքը չ'հատուցանելը մե՞ղք է։

Ամբարիշտը փոխ է առնում և չէ վճարում։ Սաղմ. ԼԷ. 21։

93. Ստութիւնը արգելուա՞ծ է։

Ճշմարտութիւն խօսեցէք ամեն մէկ-նըրդ իւր ընկերին հետ։ Եփես. Դ. 25։

94. Աստուած ի՞նչպէս է նայում ստախօսներին։

Սուտ շրթունքը Աստուծոյ զզուելի է։ Առակ. ԺԲ. 22։

95. Ի՞նչ պիտի լինի բոլոր սուտ խօսողներին

Բոլոր ստախօսներին բաժինը կրակով և ծծումբով վառած լճին մէջ պիտի լինի։

Յայտ. ԻԱ 8:

96. Սուտ լուր տարածելը մեղք է՞:

*Սուտ լուր պիտի չտարածես:* Ելից. ԻԳ. 1:

97. Մեղք է սուտ համբաւ հանելը:

*Քո ժողովուրդիդ մէջ չարախօսութիւն անելու չպտըտես:* Ղեւտ. ԺԹ. 16:

98. Յանկանալը արգելուա՞ծ է:

*Մի ցանկանար:* Հռոմ. ԺԳ. 9:

99. Ագահութիւնը Աստուծոյ դէմ մեղք է՞:

*Ագահութիւն՝ որ կռապաշտութիւն է:* Կող. Գ.

100. Ի՞նչ է ասում Առաքեալը արծաթասիրութեան մասին:

*Ամէն չարութիւնների արմատը արծաթասիրութիւնն է:* Ա. Տիմ. Զ. 10:

101. Ագահ մարդը կկշտանա՞յ:

*Արծաթ սիրողը արծաթից չի կշտանալ՝ ոչ էլ հարստութիւն սիրողը երկրին բերքիցը:* Ժող. Ե. 10:

102. Մեր վիճակից պարտաւո՞ր ենք գոհ լինել:

*Ես սովորեցի գոհ լինել իմ գտնուած վիճակում.* Փիլիպ. Դ.



103. Մեղք է մեր սրտերը աշխարհային բաներին տալը:

*Մի՛ սիրէք աշխարհս, ո՛չ էլ ինչ որ կայ աշխարհումս* Ա. Յովհ. Բ. 15:

104. Կարելի՞ է որ փոքր բաների մէջ էլ յանցաւոր համարուինք, ինչպէս որ մեծ բաների մէջ:

*Ով որ բոլոր օրէնքը պահէ և մէկ բանի մէջ յանցաւոր լինի, նա ամենին պարտական կ'լինի:* Յակ. Բ. 10:

105. Ո՞րը աւելի ցանկալի է ունենալը, բարի բնաւորութիւն թէ շատ արծաթ:

*Բարի անունը շատ հարստութիւնից ընտիր է:* Առակ. ԻԲ. 1:

106. Հարստութեան մէջ ի՞նչ վտանգ կայ:

*Ճշմարիտն ասում եմ ձեզ, որ հարուստը դժուարութեամբ պիտի մտնէ երկնքի թագաւորութիւնը:* Մատթ. ԺԹ. 23:

107. Հոգուց աւելի ի՞նչ թանկագին բան կայ:

*Ի՞նչ օգուտ է մարդին, որ բոլոր աշխարհը շահէ և իւր անձը կորցնէ, կամ իւր անձին համար ի՞նչ փրկանք պիտի տայ մարդ:* Մարկ. Ը. 36, 37:

108. Պատուիրուա՞ծ է որ բարերար և ու-

շղթայած չէին։

Բարերարութիւնը և աղքատներին պէտք եղած բաներին հոգալը մի՛ մոռանաք, որովհետև Աստուած այնպիսի պատարագներին է հաւանում։ Եբր. ԺԳ. 16

109. Ո՞րոց պէտք է բարութիւն անենք։

Ուստի քանի որ ժամանակը ձեռքներիս է, բարութիւն անենք ամենին, մանաւանդ հաւատքի ընտանիքներին։ Գաղ. Զ. 10։

110. Աղքատները է՞լ կարող են հարուստներին պէս բարերար և առատաձեռն լինել։

Եթէ առաջ յօժարութիւն լինի, ըստ որ ունեցածին չափովը ընդունելի է և ոչ թէ չունեցածին չափովը։ Բ. Կորն. Ը. 12։

111. Ի՞նչ պէտք գործենք, երբոր մարդիկ մեզ հետ թշնամութեամբ վարուին։

Սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին, բարի արէք նրանց՝ որ ձեզ ատում են, և աղօթք արէ՛ք նորանց համար՝ որ ձեզ չարչարում են և հալածում։ Մատթ. Ե. 44։

112. Ի՞նչ է անժուժկալութեան հետևանքը այս աշխարհումս։



Գինեմոլն և շուայլը աղքատ են լինում։ Առակ. ԻԳ. 21։

113. Ի՞նչ պէտք է լինի գինեմոլներին՝ միւս աշխարհումը։

Ո՛չ գողերը, ո՛չ ագահները, ո՛չ գինովները և ո՛չ յափշտակողները՝ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն։ Ա. Կորն. Զ. 10։

114. Թէ որ այսպէս են գինեմոլութեան հետևանքները այս աշխարհիս և գալու աշխարհին մէջ, ինչու տեղ փորձութեան մէջ պէտք չգենք։

Մի՛ նայիր գինու կարմրութեանը՝ գաւաթին մէջ իւր գոյնը ցոյց տալուն և ուղիղ վազելուն. նա վերջը օձի պէս խածնում է և քարբի պէս խայթում է։ Առակ. ԻԳ. 31, 32։

115. Յօժար պէտք չլինի՞ք հետևել չգեղ շատ հարբեցող հեղուկներ գործածելու, երբ որ օրինակը պատճառ պէտք լինի ուրիշներին անբարեխառն լինելուն։

Լաւ է միս չուտել և գինի չխմել, ոչ էլ մէկ բան անել, որովհետև քո եղբայրդ կը գլորվի կամ կ'գայթակղվի կամ կ'տկարանայ։ Հռոմ. ԺԴ. 21։

116. Լա՞ւ է փորձութեան մէջը մտնել:

Նորանից զգուշացի՛ր, նորա՛ մօտից մի՛ անցնիր. նորանից խոտորվի՛ր և անցի՛ր: Առակ. Դ. 15:

117. Ի՞նչպէս կարող ենք դէմ դնել սատանայի փորձութիւններին:

Ձեր վերայ հագէք Աստուծոյ սպառազինութիւնը, որ կարող լինիք սատանայի հնարքներին դէմ կենալու: Եփես. Զ. 11:

118. Ի՞նչ է ասում Քրիստոս խաղաղարարների համար:

Երանի խաղաղութիւն անողներին, որովհետև նորանք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին: Մատթ. Ե. 9:

119. Անձնասէ՞ր պիտի լինինք: Քրիստոս անձնասէր էր՞:

Քրիստոս էլ ոչ թէ իւր անձին հաճոյ եղաւ: Հռոմ. ԺԵ. 3:

120. Ծոյլ պիտի լինի՞նք:

Ծոյլ մարդը անօթի կ'մնայ: Առակ. ԺԹ. 15:

121. Պարտաւո՞ր ենք ժուժկալութիւն ունենալ:

Երկայնամիտ մարդը հզօր մարդուցը լաւ է և իւր ոգին զսպողը քաղաք առնողից: Առակ. ԺԶ. 32:



122. Կարեկից և խոնարհ պիտի՞ լինինք:

Կարեկից և խոնարհ եղէք: Ա. Պետ. Գ. 8:

123. Ի՞նչպէս է խաղաղութեամբ պատասխան տալ օգտակար:

Մեղմ պատասխանը սրտմտութիւնը իջեցնում է: Առակ. ԺԵ. 1:

124. Երախտաւո՞ր է շողոքորթութիւն անել:

Իւր ընկերին շողոքորթութիւն անող մարդը՝ նորա ոտքերին որոգայթ է լարում: Առակ. ԻԹ. 5:

125. Չարագործների ճանապարհը ի՞նչ է:

Անօրէններին ճանապարհը դժուարին է: Առակ. ԺԳ. 15:

126. Ի՞նչպէս է արդարների ճանապարհը:

Նորա ճանապարհները հաճոյական ճանապարհներ են և նորա բոլոր շաւիղները խաղաղութիւն են: Առակ. Գ. 17:

127. Ամբարիշտները երջանի՞կ են:

Ամբարիշտները խաղաղութիւն չունին, ասում է Տէրը: Եսայ. ԽԸ. 22:

128. Բոլորս պիտի մեռնի՞նք:

Մարդիկներին սահմանուած է միան-

գամ մեռնիլ և նորանից յետոյ դատաստան: Եբր. Թ. 27:

129. Մահը ինչպէ՞ս մտաւ աշխարհ:

Մէկ մարդից մեղքը աշխարհ մտաւ և այն մեղքից մահը: Հռոմ. Ե. 12:

130. Ի՞նչ է տալիս Աստուածաշունչը հաւատացեալներին համար, երբ որ մեռնին:

Երանելի են այն մեռելները, որք յԱստուած ննջեցին: Յայտ. ԺԴ. 13:

131. Քրիստոնեաները կարո՞ղ են յաղթել մահին:

Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ: Ա. Կորնթ. ԺԵ. 54:

132. Ո՞վ է տալիս նորանց յաղթութիւնը:

Գոհութիւն Աստուծոյ, որ մեզ յաղթութիւն է տալիս Տէրոջն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռքովը: Ա. Կորնթ. ԺԵ. 57:

133. Ե՞րբ պիտի կենդանանան մեռեալները:

Ժամանակ պիտի գայ, որ բոլոր գերեզմաններումը եղողները նորա ձայնը պիտի լսեն և դուրս պիտի գան: Յովհ. Ե. 28:

134. Մարմինը յարութիւն պիտի առնի՞:

Այս ապականացու մարմինը անապականութիւն պիտի հագնի: Ա. Կորնթ. ԺԵ. 33



135. Աստուծոյ ատեանին առաջին պիտի կանգնե՞ն դատուելու:

Տեսի փոքր և մեծ մեռելները՝ որ աթոռին առաջին կանգնած էին և գրքերը բացուեցան և մէկ ուրիշ գիրք բացուեցաւ, այսինքն կենաց գիրքը. և գրքերի մէջ գրուածներից մեռեալները դատուեցան իրանց գործքերին համեմատ: Յայտ. Ի. 12

136. Դատաստանի օրը Յիսուս ի՞նչ պիտի ասէ նորանց, որ իրան սիրում են:

Եկէ՛ք իմ Հօրս օրհնուածներ, աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէ՛ք: Մատթ. ԻԵ. 34

137. Յիսուս չարագործներին ի՞նչ պիտի ասէ դատաստանի օրը:

Հեռու գնացէ՛ք ինձանից, անիծեալներ, յաւիտենական կրակին մէջը, որ պատրաստուած է սատանային և իւր հրեշտակներին համար: Մատթ. ԻԵ. 41:

138. Քրիստոս տեղ պատրաստե՞ց իրան սիրողներին համար:

Կ'գնամ և ձեզ համար տեղ կ'պատրաստեմ: Յովհ. ԺԴ. 2:

139. Բոլոր այնտեղ գնացողները երջանիկ

զամ մեռնիլ և նորանից յետոյ դատաստան: Եբր. Թ. 27:

129. Մեղքը ի՞նչպէս մտաւ աշխարհ:

Մէկ մարդից մեղքը աշխարհ մտաւ և այն մեղքից մահը: Հռոմ. Ե. 12:

130. Ի՞նչ է տալիս Աստուածաշունչը ապաշխարողներին համար, երբ որ մեռնին:

Երանելի են այն մեռելները, որք յԱստուած ննջեցին: Յայտ. ԺԴ. 13:

131. Քրիստոնեաները կարո՞ղ են յաղթել մահին:

Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ: Ա. Կորնթ. ԺԵ. 54:

132. Ո՞վ է տալիս նորանց յաղթութիւնը:

Գոհութիւն Աստուծոյ, որ մեզ յաղթութիւն է տալիս Տէրոջն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռքովը: Ա. Կորնթ. ԺԵ. 57:

133. Արդեօք պիտի կենդանանան նորանք:

Ժամանակ պիտի գայ, որ բոլոր գերեզմաններումը լինողները նորա ձայնը պիտի լսեն և դուրս պիտի գան: Յովհ. Ե. 28:

134. Մարմինը յարութիւն պիտի առնէ՞:

Այս ապականացու մարմինը անապականութիւն պիտի հագնէ: Ա. Կորնթ. ԺԵ. 33



135. Աստուծոյ աթոռին առաջին պիտի կանգնե՞ն դատուելու:

Տեսի փոքր և մեծ մեռելները՝ որ աթոռին առաջին կանգնած էին և գրքերը բացուեցան և մէկ ուրիշ գիրք բացուեցաւ որ կենաց գիրքն է. և գրքերի մէջ գրուածներից մեռելները դատուեցան իրանց գործքերին համեմատ: Յայտ. Ի. 12

136. Դատաստանի օրը Յիսուս ի՞նչ պիտի ասէ նորանց, որ իրան սիրած են:

Եկէ՛ք իմ Հօրս օրհնուածներ, աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէ՛ք: Մատթ. ԻԵ. 34

137. Յիսուս մեղաւորներին ի՞նչ պիտի ասէ դատաստանի օրը:

Հեռու գնացէ՛ք ինձանից, անիծեալներ, յաւիտենական կրակին մէջը, որ պատրաստուած է սատանայի և իւր հրեշտակներին համար: Մատթ. ԻԵ. 41:

138. Քրիստոս ուր պատրաստե՞ց իրան սիրողներին համար:

Կ'գնամ և ձեզ համար տեղ կ'պատրաստեմ: Յովհ. ԺԴ. 2:

139. Բոլոր այնտեղ գնացողները երջանիկ

պէտք լինի։

Երեսիդ առաջին լիքը ուրախութիւն կայ, քո աջ կողմիդ միշտ հաճութիւններ կան։ Սաղմ. ԺԶ. 11։

140. Երկնքի բնակիչները նեղութեան պէ՞տք ունենան։

Աստուած նոցանից աչքերից բոլոր արտասունքները պիտի սրբէ և էլ մահ պիտի չլինի, ո՛չ սուգ, և ո՛չ աղաղակ, և ո՛չ ցաւ պիտի լինի այսուհետև. Յայտ. ԻԱ. 4։

141. Ո՞րն է արքայութեան ճամբը։

Ջանք արէ՛ք որ նեղ դռնիցը մտնէք, որովհետև ասում եմ ձեզ, որ շատերը պիտի ուզեն մտնել և պիտի չկարողանան։ Ղուկ. ԺԳ. 24։

142. Ամէն մարդ սիրո՞ղ է և վայելո՞ղ է երկնքի ուրախութիւնները։

Այն բաները որ աչք չէ տեսել և ականջ չէ լսել և մարդի սրտի մէջ չէ ընկել, Աստուած իւր սիրելիներին համար պատրաստեց, բայց Աստուած մեզ յայտնեց իւր Հոգովը. Ա. Կորն. Բ. 9։

143. Ի՞նչ է մեր բոլոր պարտաւորութիւնը դէպ 'ի Աստուած և դէպ 'ի մարդ։



Քո Տէր Աստուածդ սիրես քո բոլոր սրտովդ և քո բոլոր անձովդ և քո բոլոր մտքովդ և քո ընկերդ սիրես քո անձնիդ պէս։ Մատթ. ԻԲ. 37, 38։

144. Ի՞նչպէս կարող ենք յոյց տալ մեր սէրը դէպ 'ի Աստուած։

Եթէ ինձ սիրում էք իմ պատուիրանքներս պահեցէ՛ք։ Յովհ. ԺԴ. 15։

145. Ի՞նչպէս կարող ես իմանալ, մեր ընկերներին ինչ պէտք անես։

Ինչպէս ուզում էք, որ մարդիկները ձեզ անեն, դուք էլ նորանց նոյնպէս արէք։ Ղուկ. Զ.

146. Ի՞նչ է պահանջում Աստուած որ, հիմայ մեր երիտասարդութեան օրերում անենք։

Մի՞ թէ այսուհետև ինձ պիտի չաղաղակես ասելով. ո՛վ հայր իմ, դու ես իմ մանկութեան առաջնորդը։ Երեմ. Գ. 4։

147. Թէ որ Աստուած մեր առաջնորդը լինէ, նա ի՞նչ պէտք պահանջէ մեզանից։

Տէրը քեզանից ինչ է պահանջում. բայց միայն իրաւունք անել. ողորմութիւն սիրել և խոնարհութեամբ քո Աստուծոյ հետ ընթանալ. Միք. Զ. 8։

148. Ի՞նչ է ճշմարիտ հաւատի բովանդակութիւնը:

Այս բոլոր խօսքին վախճանը լսենք. Աստուծուց վախի՛ր, և նորա պատուիրանքները պահի՛ր, որովհետև մարդիս բոլոր պարտաւորութիւնները այս է: Որովհետև Աստուած ամեն գործք՝ ամեն ծածուկ բաների հետ թէ բարին թէ չարը՝ դատաստանի պիտի բերէ: Ժող. ԺԲ. 13, 14:

## ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ:

Հայր մե՛ր որ երկնքումն ես, Սուրբ լինի քո անունդ. Գայ քո թագաւորութիւնդ, Լինի քո կամքդ, ինչպէս երկնքումը՝ այնպէս էլ երկրիս վերայ Մեր ամեն օրուայ հացը՝ այսօր մեզ տուր. Եւ մեզ ների՛ր մեր պարտքերը, ինչպէս որ մենք էլ ներում ենք մեր պարտականներին.



Եւ մեզ դէպ՚ի փորձութիւն մի տանիր:

Բայց մեզ փրկի՛ր չարից.

Որովհետև քոյդ է թագաւորութիւնը և զօրութիւնը և փառք յաւիտեանս: Ամէն:

## ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՔՆԵՐԸ:

Ա. Իմ առաջիս ուրիշ աստուածներ չունենաս:

Բ. Դու քեզ համար կուռք չշինես, ոչ էլ վեր երկնքումը՝ կամ ցած երկրիս վերայ կամ երկրի տակի ջրերի մէջ եղած բաներին մէկ նմանութիւնը. Նորանց երկրպագութիւն չանես և նորանց չպաշտես, որովհետև ես քո Տէր Աստուածդ՝ նախանձոտ Աստուած եմ, որ

հաստուցանում եմ հայրերի անօրէնութիւնը որդիկներին, մինչև նորանց երրորդ և չորրորդ ազգը, որ ինձ ատում են և ողորմում եմ նորանց մինչև հազար ազգը՝ որ ինձ սիրում են և իմ պատուիրանքներս պահում են:

Գ. Քո Տեառն Աստուծոյ անունը դադարկ տեղը բերանդ չառնես. որովհետև Աստուած իւր անունը դադարկ տեղը բերան առնողին անմեղ պիտի չհամարէ:

Դ. Շաբաթ (հանգստութեան օրը) միտդ բեր, նորան սուրբ պահելու համար, վեց օր պիտի աշխատես և բոլոր գործդ անես. բայց եօթներորդ օրը Տեառն քո Աստուծոյդ հանգըս-



տութեան օրն է. այն օրը մէկ գործ էլ պիտի չգործես, ո՛չ դու, ո՛չ քո որդիդ, ո՛չ քո աղջիկդ, ո՛չ քո անասունդ, ո՛չ քո տանդ եղած օտարականը. որովհետև Աստուած վեց օրուան մէջ արաւ երկինքն և երկիրը, ծովը և բոլոր նորանց մէջ եղածները և եօթներրորդ օրը հանգստացաւ, նրա համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը և սրբեց զայն:

Ե. Պատուի՛ր քո հօրդ և մօրդ, որ քո օրերդ երկայն լինին այն երկրին վերայ, որն որ քո Տէր Աստուածդ քեզ կ՚տայ:

Զ. Սպանութիւն մի՛ անիր:

Է. Շնութիւն մի՛ անիր:

Ը. Գողութիւն մի՛ անիր:

Թ. Քո ընկերիդ տանը մի ցանկանար. քո ընկերիդ կնկանը, կամ նորան ծառային, կամ նորան աղախնին, կամ նորան եզին, կամ նորան էշին, և քո ընկերիդ ամենևին մէկ բանին մի՛ ցանկանար: Ելից. Ի. 3, 17:

---

Տասն Պատուիրանների Բովանդակութիւնը:

Քո Տէր Աստուածդ սիրես քո բոլոր սրտովդ, և քո բոլոր անձնովդ և քո բոլոր մտքովդ. այս է առաջին և մեծ պատուիրանքը: Այս երկու պատուիրաններից կախուած են բոլոր օրէնքը և մարգարէները: Մատթ. ԻԲ. 37, 40:

---

Մանուկների պարտաւորութիւնները դէպի ծնողները.

Ձեզանից ամեն մէկը իւր մօրից և իւր հօրից պիտի վախենայ: Ղևտ. ԺԹ. 3:



Որդեա՛կ իմ, քո հօրդ խրատին նայիր և քո մօրդ օրէնքը մի մերժիր: Առակ. Ա. 8:

Որովհետև Աստուած պատուիրեց, ասելով. քո հօրդ և մօրդ պատուիր. և ով որ իւր հօրը կամ մօրը անիծէ՝ թող մահով մեռնի: Մատթ. ԺԵ. 4:

Որդիք, ձեր ծնողներին հնազանդ եղէք Տէրովը, որ այն է արժանը: Պատուիր քո հօրդ և մօրդ, (որ առաջին պատուիրանն է խոստմունքով,) որ քեզ բարի լինի և երկար կեանք ունենաս երկրի վերայ: Եփես. Զ. 1 3:

Որդիներ, ամեն բանի մէջ հնազանդ եղէք ձեր ծնողներին. որովհետև այն է Տէրի առաջին հաճելի: Կող. Գ. 20:

### Ընկերների ընտրութիւն։

Որդեակ իմ, եթէ մեղաւորները կամենան քեզ գլխից հանել, դու նորանց հաւանութիւն մի տար։ Որդեակ իմ, նորանց հետ ճանապարհ մի գնար. Նորանց շաւղից քո ոտներդ ետ պահիր, որովհետեւ նորանց ոտները չարութեան համար են վազում և արիւն թափելու համար են շտապում։ Առակ. Ա. 10, 15, 16։
Իմաստուններին հետ ման եկողը իմաստուն կ'լինի, բայց անմիտների հետ ընկերացողը չար կը լինի։ Առակ. ԺԳ. 20։
Բարկացող մարդու հետ ընկերութիւն մի անիր, և ցասկոտ մարդու հետ մի գնար, որ չը



լինի թէ նորա ճանապարհները սովորես և քո հոգուդ համար որոգայթ աշխատես։ Առակ. ԻԲ. 24. 25։

---

## ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ

Այս դասը որ սովորես,
Ջանք արա, ջանք արա.
Թէ առաջ չյաջողվիս,
Նորից ջանք արա։

Քաջութիւնդ կը յայտնես,
Երբ միայն կը համբերես.
Մի վախիր, պիտի յաղթես.
Ջանք արա, ջանք արա։

Շատ անգամ կը սխալվիս,
Ջանք արա, ջանք արա.
Վերջը պիտի յաջողվիս,
Նորից ջանք արա։

## ՓՈՔՐ ԲԱՆԵՐ

Փոքր կաթիլները
Մեծ ծովեր կանեն.
Աւազի հատերը
Լեռներ կ՚դիզեն։

Փոքր վայրկեանները
Թէպէտ ոչինչ են.
Անվախճան դարերը
Լոկ նորանցից են։

Փոքր յանցանքները
Սիրտն կապականեն,
Եւ շատ մեծ մեղքերը
Նրանցից կելանեն։

Փոքր բարիքները
Շատ մարդոց կազդեն,
Եւ սիրոյ խօսքերը
Աստ երկինք կանեն։

Гос Библиотека
ZUUՌ-Арм ССР
им. А. Мясникяна


ԳԻՆՆ Է
10 ԿՈՊԷԿ